



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

5 դեկտեմբերի 2018թվականի

թիվ 98

քաղ. Սանկտ Պետերբուրգ

«Ալկոհոլային արտադրանքի անվտանգության մասին»

Եվրասիական տնտեսական միության

տեխնիկական կանոնակարգի վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 52-րդ հոդվածին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 29-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը որոշեց.

1. Ընդունել կցվող՝ «Ալկոհոլային արտադրանքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգը (ԵԱՏՄ ՏԿ 047/2018):

2. Սահմանել, որ «Ալկոհոլային արտադրանքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգն

(ԵԱՏՄ ՏԿ 047/2018) ուժի մեջ է մտնում սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 24 ամիսը լրանալուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
---	---	--	---	--------------------------------------

Մ. Գրիգորյան

Ի. Պետրիշենկո

Ա. Մամին

Ժ. Ռազակով

Ա. Միլուանով

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի՝
2018 թվականի դեկտեմբերի 5-ի
թիվ 98 որոշմամբ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

**Եվրասիական տնտեսական միության
«Ալկոհոլային արտադրանքի անվտանգության մասին»
(ԵԱՏՄ ՏԿ 047/2018)**

I. Կիրառության ոլորտը

1. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքներում (այսուհետ, համապատասխանաբար՝ անդամ պետություններ, Միություն) կիրառման եւ կատարման համար պարտադիր՝ անդամ պետությունների տարածքներում շրջանառության մեջ դրվող ալկոհոլային արտադրանքին ներկայացվող պահանջները, դրանց առնչվող՝ ալկոհոլային արտադրանքի արտադրության, պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող պահանջները, ինչպես նաեւ ալկոհոլային արտադրանքի մակնշմանը եւ փաթեթավորմանը ներկայացվող պահանջները՝ դրա ազատ տեղափոխումն ապահովելու համար:

Այն դեպքում, երբ ալկոհոլային արտադրանքի վերաբերյալ ընդունվել են Միության (Մաքսային միության) այլ տեխնիկական կանոնակարգեր, որոնցով սահմանվում են ալկոհոլային արտադրանքին ներկայացվող պահանջներ, դրանց առնչվող՝ ալկոհոլային արտադրանքի արտադրության, պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ ուտիլիզացման

գործընթացներին, ինչպես նաև մակնշմանը եւ փաթեթավորմանը ներկայացվող պահանջներ, ապա ակոհոլային արտադրանքը եւ դրա արտադրության, պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ ուտիլիզացման գործընթացները, ինչպես նաև ակոհոլային արտադրանքի մակնշումը եւ փաթեթավորումը պետք է համապատասխանեն Միության (Մաքսային միության) բոլոր այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է ակոհոլային արտադրանքի վրա:

Սույն տեխնիկական կանոնակարգը լրացնում է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ հաստատված՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) (այսուհետ՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 021/2011)), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ հաստատված՝ «Սննդամթերքի մակնշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 022/2011) (այսուհետ՝ «Սննդամթերքի մակնշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 022/2011)) եւ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ հաստատված՝ «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 005/2011) (այսուհետ՝ «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 005/2011)) պահանջները եւ չի հակասում դրանց:

2. Սույն տեխնիկական կանոնակարգը մշակվել է մարդու կյանքի եւ առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների ու բույսերի կյանքի եւ առողջության պաշտպանության, ակոհոլային արտադրանքի սպառողներին՝ դրա նշանակության եւ անվտանգության մասով շփոթեցնող գործողությունները կանխելու նպատակով:

3. Սույն տեխնիկական կանոնակարգը տարածվում է անդամ պետությունների տարածքներում շրջանառության մեջ դրվող ալկոհոլային արտադրանքի վրա:

Սույն տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման առարկաներն են՝

ալկոհոլային արտադրանքը.

ալկոհոլային արտադրանքին ներկայացվող պահանջներին առնչվող՝ արտադրության, պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ օգտահանման գործընթացները:

4. Սույն տեխնիկական կանոնակարգը չի տարածվում՝

ա) անդամ պետությունների տարածքներով տարանցիկ փոխադրվող ալկոհոլային արտադրանքի վրա.

բ) գիտական նպատակներով արտադրված ալկոհոլային արտադրանքի վրա.

գ) ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար արտադրված ալկոհոլային արտադրանքի վրա՝ առանց անդամ պետությունների տարածքներում հետագայում դա իրացնելու նպատակի.

դ) անդամ պետությունների տարածքներից դուրս՝ արտաքին առևտրային պայմանագրերով արտահանման համար մատակարարվող ալկոհոլային արտադրանքի վրա.

ե) էթիլային սպիրտ պարունակող ալկոհոլային արտադրանքի վրա՝ թիվ 1 հավելվածով սահմանված ցանկին համապատասխան:

II. Հիմնական հասկացությունները

5. Սույն տեխնիկական կանոնակարգի կիրառման նպատակներով օգտագործվում են «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 021/2011), «Սննդամթերքի մակնշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 022/2011) եւ «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 005/2011) սահմանված հասկացությունները, ինչպես նաեւ հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

ալկոհոլային արտադրանք՝ էթիլային սպիրտի օգտագործմամբ կամ առանց դրա պատրաստված սննդամթերք, որն արտադրված է սննդային հումքից եւ (կամ) սպիրտ պարունակող սննդամթերքից եւ որում էթիլային սպիրտի ծավալային մասը 0,5 տոկոսից ավելի է՝ բացառությամբ սույն տեխնիկական կանոնակարգի թիվ 1 հավելվածով նախատեսված ցանկում ընդգրկված արտադրանքի:

Ալկոհոլային արտադրանքը լինում է հետեւյալ տեսակների՝ էթիլային սպիրտ, սպիրտային խմիչքներ, թույլ ալկոհոլային խմիչքներ, գինեգործական արտադրանք, թորվածքներ, գարեջրագործական արտադրանք, մեղրագործական արտադրանք, սպիրտ պարունակող սննդամթերք.

լցվածքով ալկոհոլային արտադրանք՝ արտադրական կամ տրանսպորտային տարայում (տարողունակ սարքավորման մեջ, այդ թվում՝ տակառներում, պահոցներում, երկաթուղային եւ ավտոմոբիլային ցիստեռներում, պահպանման տանկերում (ֆլեքսի-տանկերում) եւ տրանսպորտի տարբեր տեսակներով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար նախատեսված համանման սարքավորումներում) տեղադրված ալկոհոլային արտադրանք, որը նախատեսված է սպառողական փաթեթվածքում լցման կամ ալկոհոլային արտադրանքի այլ տեսակների կամ այլ արտադրանքի արտադրության համար, որը ենթակա չէ մինչեւ դրա լցումը կամ այլ ալկոհոլային արտադրանքի կամ այլ արտադրանքի արտադրության ժամանակ վերամշակումը սպառողին՝ որպես պատրաստի արտադրանք իրացնելու համար.

գինեգործական արտադրանք՝ ակոհոլային արտադրանք, պատրաստված՝ թարմ խաղողի ամբողջական կամ մանրատած պտուղների կամ մրգերի, խաղողի քաղցուի, մրգային քաղցուի ամբողջական սպիրտային խմորման արդյունքում.

խմորման արդյունքների հետագա թորմամբ եւ հնեցմամբ կամ առանց հնեցման.

թարմ խաղողի ամբողջական կամ մանրատած պտուղների, մրգերի կամ խաղողի քաղցուի, մրգային քաղցուի ամբողջական կամ ոչ ամբողջական սպիրտային խմորման արդյունքում պատրաստված՝ հետեւյալ մեկ կամ ավելի մթերքների ավելացմամբ. սննդային հումքից կրկնաթորված էթիլային սպիրտ, խաղողի թորվածք, գինու թորվածք, մրգային թորվածք, այդ թվում՝ շաքար պարունակող կրկնաթորված մթերքներ, համային նյութեր, սննդային հավելումներ, բուրավետիչներ, ածխածնի դիօքսիդ, ջուր՝ նշված այն փաստաթղթում (փաստաթղթերում), որին համապատասխան պատրաստվել է ակոհոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ կամ այլ փաստաթուղթ):

Թիվ 3 հավելվածով սահմանված ցանկի համաձայն՝ գինեգործական արտադրանքի արտադրության համար թույլատրվում է սույն տեխնիկական կանոնակարգի թիվ 3 հավելվածի 10-րդ աղյուսակում նշված տեխնոլոգիական գործողությունների եւ տեխնոլոգիական միջոցների կիրառումը.

թորվածք՝ ակոհոլային արտադրանք՝ 52 տոկոսից ավելի էթիլային սպիրտի ծավալային մասով, ստացված խմորման ենթարկված քաղցուի, լցվածքով գինու (գինենյութերի), սպիրտ պարունակող խմորիչային նստվածքների, թանձրուկային նստվածքների, սպիրտ պարունակող մզվածքների, սպիրտ պարունակող այլ սննդամթերքի պարզ կամ չափազատված թորմամբ կամ կրկնաթորմամբ: Թորվածքն օգտագործվում է ակոհոլային արտադրանքի, այդ թվում՝ գինեգործական արտադրանքի արտադրության համար եւ կարող է կրել այն հումքի կամ խմիչքի անվանումը, որի համար պատրաստվել է.

մեղրագործական արտադրանք՝ մեղրի գերակշռող բույրով եւ համով ալկոհոլային արտադրանք՝ արտադրված մեղրից՝ կրկնաթորված էթիլային սպիրտի, շաքարի, մեղրային թորվածքի, մրգային թորվածքի, կոնցենտրացված մրգահյութի, ածխածնի դիօքսիդի, թարմ մրգային քաղցունների, սպիրտացված մրգահյութերի, բնական համաբուրավետիչ նյութերի եւ պատրաստուկների ավելացմամբ կամ առանց դրա.

գարեջրագործական արտադրանք՝ գարեջրագործական հումքից եւ (կամ) գարեջրից արտադրված ալկոհոլային արտադրանք՝ պտղային եւ այլ բուսական հումքի, դրանց վերամշակման արդյունքների, բուրավետիչների ավելացմամբ կամ առանց դրա՝ առանց էթիլային սպիրտ ավելացնելու.

թույլ ալկոհոլային խմիչքներ՝ պատրաստի արտադրանքում էթիլային սպիրտի 7 տոկոսից պակաս պարունակությամբ (թնդության) ալկոհոլային արտադրանք՝ արտադրված առանց օգտագործելու կամ օգտագործելով կրկնաթորված էթիլային սպիրտ եւ (կամ) սպիրտ պարունակող սննդամթերք, նախապատրաստված (մշակման ենթարկված) ջուր կամ հանքային ջուր, որի ընդհանուր հանքայնացումը կազմում է 1 գ/լ-ից ոչ ավելի, պարունակում է բաղադրիչներ, որոնց օգտագործումը նախատեսված է փաստաթղթով (փաստաթղթերով), որին համապատասխան արտադրված է ալկոհոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ կամ այլ փաստաթուղթ), այդ թվում՝ շաքար պարունակող մթերքներ, թթուներ, ածխածնի երկօքսիդ, մրգերի (պտուղների, հատապտուղների) եւ հացահատիկային հումքի թուրմեր, լուծամզվածքներ, հյութեր, բուսական հումք, կաթնամթերք, մեղր եւ մեղվաբուծական այլ մթերքներ (այդ թվում՝ մեղրախորիսիս, ակնամում, զաբրուս, մայր մեղվի կաթ), աղեր, այլ սպիրտային խմիչքներ, սննդային հավելումներ եւ չի դասվում գինեգործական եւ գարեջրագործական արտադրանքի թվին.

սպիրտային խմիչքներ՝ կրկնաթորված էթիլային սպիրտի, եւ (կամ) սպիրտ պարունակող սննդամթերքի, եւ (կամ) այլ ալկոհոլային արտադրանքի կիրառմամբ արտադրված ալկոհոլային արտադրանք.

սպիրտ պարունակող սննդամթերք՝ էթիլային սպիրտի 0,5 տոկոսից ոչ ավելի ծավալային մասով ալկոհոլային արտադրանք, որը ալկոհոլային արտադրանքի արտադրության համար նախատեսված՝ սպիրտ պարունակող կիսաֆաբրիկատ է, այդ թվում՝ խմորման ենթարկված մրգային գինեկոնյութեր, խմորման ենթարկված, սպիրտացված մրգային գինեկոնյութեր, խաղողի քաղցու, մրգային սպիրտացված քաղցու, սպիրտացված քաղցուններ, սպիրտացված հյութեր, սպիրտացված թուրմեր, սպիրտացված օշարակներ, բուրավետ սպիրտներ, ջրասպիրտային լուծամզվածքներ, խտացված սննդային հիմքեր, սննդային բուրավետիչներ, այլ կիսաֆաբրիկատներ.

էթիլային սպիրտ՝ էթանոլի ջրային լուծույթ հանդիսացող՝ 88 տոկոսից ոչ պակաս թնդության ալկոհոլային արտադրանք, որն արտադրված է շաքար եւ օսլա պարունակող հումքի (բացառությամբ մրգայինի) սպիրտային խմորման մեթոդով՝ խմորվող քաղցուի հետագա թորմամբ եւ (կամ) բազմաթորմամբ կամ էթիլային սպիրտահումքի կրկնաթորմամբ, որը պարունակում է ուղեկցող ցնդող խառնուկներ, ինչպես նաեւ ստացվել է սննդային հումքից պատրաստված էթիլային սպիրտի գլխավոր ֆրակցիայից եւ էթիլային սպիրտի, օղիների, լիկյոր-օղու արտադրատեսակների արտադրության ժամանակ առաջացող վերամշակման արդյունքներից: Էթիլային սպիրտի տեսակներն են՝ էթիլային սպիրտահումքը եւ կրկնաթորված էթիլային սպիրտը: Էթիլային սպիրտի արտադրության համար օգտագործվում է սննդային հումք՝ թիվ 2 հավելվածով սահմանած ցանկի համաձայն.

սննդային հումքից ստացվող էթիլային սպիրտի կատեգորիաներն են՝

կրկնաթորված էթիլային սպիրտ՝ շաքար եւ օսլա պարունակող հումքի սպիրտային խմորման մեթոդով արտադրված՝ 96 տոկոսից ոչ պակաս թնդության էթիլային սպիրտ՝ խմորվող քաղցուի հետագա բազմաթորմամբ կամ էթիլային սպիրտահումքի, ինչպես նաեւ սննդային հումքից պատրաստված էթիլային սպիրտի գլխավոր ֆրակցիայի եւ սննդային հումքից, օղիներից, լիկյոր-օղու արտադրատեսակներից էթիլային սպիրտի արտադրության ժամանակ գոյացող վերամշակման արդյունքների հետագա կրկնաթորմամբ, որը պարունակում է ուղեկցող ցնդող խառնուկներ.

Էթիլային սպիրտահումք՝ հասուն խմորվող քաղցուի թորմամբ պատրաստված՝ 96 տոկոսից պակաս թնդության էթիլային սպիրտ, որը նախատեսված է կրկնաթորված էթիլային սպիրտի արտադրության համար եւ պարունակում է ուղեկցող ցնդող նյութեր.

սպիրտային խմիչքների կատեգորիաներն են՝

օղի՝ կրկնաթորված էթիլային սպիրտի եւ նախապատրաստված (վերամշակման ենթարկված) ջրի հիմքով արտադրված՝ 37,5-ից մինչեւ 56 տոկոս թնդության սպիրտային խմիչք՝ ջրասպիրտային լուծույթի՝ կլանիչներով մշակմամբ (տեսակավորմամբ)՝ ամբողջական մաքրման համար հետագա ֆիլտրմամբ, որն անգույն ջրասպիրտային լուծույթ է՝ մեղմ, օդուն բնորոշ համով եւ բույրով.

ապրանքի ծագման վայրի պաշտպանված անվանմամբ օղի՝ օղի, որը 37,5-ից մինչեւ 56 տոկոս թնդության անգույն ջրա-սպիրտային լուծույթ է՝ մեղմ, օդուն բնորոշ համով, որն ստացվում է հացահատիկային հումքից կրկնաթորված էթիլային սպիրտը հատուկ նախապատրաստված (մշակման ենթարկված) ջրի հետ խառնելու եղանակով՝ այդ ջրասպիրտային լուծույթը ակտիվ ածուխով հետագայում մշակելով, առանց մշակելու կամ չոր ճարպագերծված կաթով մշակելով՝ ամբողջական մաքրման համար՝ սահմանված հատիկաչափական կազմով քվարցային ավազի միջով հետագա ֆիլտրմամբ: Թույլ են տրվում բարկահամ արոմատիկ, մրգային հումքից եւ այլ տեսակի բուսական եւ սննդային հումքից ստացվող բուրավետ սպիրտներ ու սպիրտային թուրմեր, բուսական հումքի լուծամզվածքներ, էթերայուղեր, համաբուրավետիչ բնական նյութեր, սննդային հավելումներ, համալիր սննդային հավելումներ եւ այլ սննդային բաղադրիչներ.

հատուկ օղի՝ սննդային բաղադրիչներ ներմուծելու հաշվին եւ (կամ) արոմատիկ սպիրտների, այլ բուրավետ բաղադրամասերի ավելացմամբ ստացված՝ 37,5-ից մինչեւ 45 տոկոս թնդության՝ ընդգծված յուրահատուկ բույրով եւ մեղմ համով օղի, որը պատրաստված է հացահատիկային հումքից կրկնաթորված էթիլային սպիրտը հատուկ նախապատրաստված (մշակման ենթարկված) ջրի հետ

խառնելու եղանակով՝ այդ ջրասպիրտային լուծույթն ակտիվ ածուխով հետագա մշակմամբ, ամբողջական մաքրման համար՝ սահմանված հատիկաչափական կազմով քվարցային ավազի միջով հետագա ֆիլտրմամբ.

լիկյոր-օղու արտադրատեսակներ՝ 600 գ/լ-ից ոչ ավելի շաքարի պարունակությամբ, 7-ից մինչև 60 տոկոս թնդության սպիրտային խմիչքներ, որոնք կրկնաթորված էթիլային սպիրտի, նախապատրաստված (մշակման ենթարկված) ջրի, տարբեր սպիրտացված հյութերի, օշարակների, թուրմերի եւ մրգային (պտղահատապտղային) ու բուրավետ բուսական հումքը վերամշակելու, շաքարի օշարակ, եթերայուղեր, խաղողի գինիներ, բրենդի, կիտրոնաթթու եւ այլ սննդային բաղադրամասեր (այդ թվում՝ ածխածնի երկօքսիդ) ավելացնելու միջոցով ստացվող բուրավետ սպիրտների խառնուրդ են, որոնք պատրաստված են տարախառնման (կուպաժավորման) միջոցով՝ հետագա հնեցմամբ կամ առանց հնեցման եւ տարախառնուրդի (կուպաժի) ֆիլտրմամբ: Լիկյոր-օղու արտադրատեսակներով լցված շշերում թույլատրվում է բաղադրագրով նախատեսված բույսերի, պտուղների եւ հատապտուղների առանձին մասերի առկայությունը:

Օղիների, ապրանքի ծագման վայրի պաշտպանված անվանումով օղիների, հատուկ օղիների եւ լիկյոր-օղու արտադրատեսակների արտադրությունում արգելվում է օգտագործել էթիլային սպիրտի գլխավոր ֆրակցիայից կրկնաթորված էթիլային սպիրտ եւ լիկյոր-օղու արտադրության թափոններ.

ապերիտիվ՝ 50 գ/լ-ից ոչ պակաս եւ 180 գ/լ-ից ոչ ավելի շաքարի պարունակությամբ, 12-ից մինչև 35 տոկոս թնդության լիկյոր-օղու արտադրատեսակ, որը պատրաստված է թույլ դառնահամ առաջացնող սննդային բաղադրիչների օգտագործմամբ.

կոկտեյլ՝ 240 գ/լ-ից ոչ ավելի շաքարի պարունակությամբ, 20-ից մինչև 40 տոկոս թնդության լիկյոր-օղու արտադրատեսակ, որը պատրաստված է սննդային բաղադրիչների ավելացմամբ.

բալզամ՝ 20 տոկոսից ոչ պակաս թնդության, 50 գ/դմ-ից ոչ պակաս ընդհանուր լուծամզվացքծի պարունակությամբ, շագանակագույնից մինչև մուգ

շագանակագույն, թունդ բույրով լիկյոր-օդու արտադրատեսակ՝ պատրաստված սննդային բաղադրիչներից եւ կիսաֆաբրիկատներից, որոնց կազմում կարող են ընդգրկվել դեղաբույսեր, շաքարի կուլեր.

ջին՝ գիհու գերիշխող համով, 37,5 տոկոսից ոչ պակաս թնդության ապիրտային խմիչք՝ ստացված ջրասպիրտային լուծույթը գիհու հատապտուղների (*Juniperus communis* L.) համաբուրավետիչ նյութերով եւ այլ բնական համաբուրավետիչ նյութերով բուրավետացնելու միջոցով, ընդ որում՝ գիհու բույրը եւ համը պետք է լինեն գերիշխող.

թորած ջին՝ գիհու գերիշխող բույրով եւ համով, 37,5 տոկոսից ոչ պակաս թնդության սպիրտային խմիչք՝ ստացված 96,2 տոկոսից ոչ պակաս թնդության էթիլային սպիրտի եւ նախապատրաստված (մշակման ենթարկված) ջրի խառնուրդի մեկ կամ բազմակի թորմամբ՝ ավելացնելով գիհու պտուղներ, առանց ավելացնելու կամ ավելացնելով այլ բուսական հումք եւ (կամ) բնական համաբուրավետիչ նյութեր, առանց ավելացնելու կամ ավելացնելով կրկնաթորված էթիլային սպիրտ՝ նախապատրաստված (մշակման ենթարկված) ջրով հետագա նոսրացմամբ (անհրաժեշտության դեպքում), առանց ավելացնելու կամ ավելացնելով ներկանյութեր, քաղցրացուցիչներ եւ այլ սննդային հավելումներ.

չոր ջին՝ շաքարի 0,1 գ/լ-ից ոչ ավելի պարունակությամբ թորած ջին, որի բույրը ստացվել է բացառապես էթիլային սպիրտի՝ ավանդական եղանակով վերաթորման միջոցով, բոլոր օգտագործվող բնական բուսական նյութերի (հումքի) առկայության դեպքում, ինչպես նաեւ 70 տոկոսից ոչ պակաս թնդության ջինի թորվածքից՝ առանց ներկանյութերի ավելացման.

լիկյոր՝ 15 տոկոսից ոչ պակաս թնդության լիկյոր-օդու արտադրատեսակ, որը պատրաստված է կրկնաթորված էթիլային սպիրտից կամ սպիրտային խմիչքներից՝ շաքար պարունակող մթերքների, գյուղատնտեսական ծագման ապրանքների կամ սննդամթերքի (այդ թվում՝ կաթ եւ կաթնամթերք, գինի, համաբուրավետիչ նյութեր) ավելացմամբ, բալի թորվածքից պատրաստված բալի լիկյորի համար շաքարի պարունակությունը՝ 70 գ/լ-ից ոչ պակաս, կամ 80գ/լ-ից ոչ

պակաս՝ բոգի (օձադեղի) կամ նմանատիպ այլ բույսերի լիկյորի համար, որոնք միակ բնական բուրավետ հումքն են, ինչպես նաև 100 գ/լ-ից ոչ պակաս՝ այլ լիկյորների համար: Համաբուրավետիչ նյութեր չեն օգտագործվում սև հաղարջի, բալի, ազնվամորու, մոշի, հապալասի, ցիտրուսայինների, թթի, արկտիկական մոշի, ճախնամորու, կապույտ հապալասի, կարմիր հապալասի, չիչխանի, արքայախնձորի լիկյորների համար, ինչպես նաև անանուխից, բոգից (օձադեղից), անխոնից, ալպիական օշինդրից, վիրախոտից, դեղաբույսերից պատրաստվող բուսական լիկյորների համար:

թունդ լիկյոր՝ 35 տոկոսից ոչ պակաս թնդության, 250 գ/լ-ից ոչ պակաս շաքարի պարունակությամբ լիկյոր.

դեսերտային լիկյոր՝ 35 տոկոսից պակաս թնդության, 100 գ/լ-ից ոչ պակաս շաքարի պարունակությամբ լիկյոր.

էմուլսիոն լիկյոր՝ 15 տոկոսից ոչ պակաս թնդության, 150 գ/լ-ից ոչ պակաս շաքարի պարունակությամբ, ոչ թափանցիկ, առանց կոդմնակի ներառումների լիկյոր, որը պատրաստված է սննդամթերքի (այդ թվում՝ կաթ, սերուցք, ձու) եւ սննդային բաղադրիչների ավելացմամբ կամ առանց դրանց ավելացման.

ձվային լիկյոր՝ 15 տոկոսից ոչ պակաս թնդության, 150 գ/լ-ից ոչ պակաս շաքարի պարունակությամբ, թորվածքից եւ (կամ) սպիրտային խմիչքից պատրաստված լիկյոր, որի բաղադրության մեջ մտնում են ձվի դեղնուց (պատրաստի մթերքի համար՝ 140 գ/լ-ից ոչ պակաս), ձվի սպիտակուց, շաքար կամ մեղր՝ միայն բնական համաբուրավետիչ նյութերի հնարավոր ավելացմամբ.

կրեմ՝ 15 տոկոսից ոչ պակաս թնդության, 250 գ/լ-ից ոչ պակաս շաքարի պարունակությամբ, մրգային (պտղա-հատապտղային) հումքից պատրաստված լիկյոր՝ սննդային բաղադրիչների (բացառությամբ՝ կաթնամթերքի) ավելացմամբ.

պունջ՝ 15-ից մինչև 20 տոկոս թնդության, 300 գ/լ-ից ոչ պակաս եւ 400 գ/լ-ից ոչ ավելի շաքարի պարունակությամբ, կրկնաթորված էթիլային սպիրտից պատրաստված լիկյոր-օղու արտադրատեսակ՝ սպիրտացված հյութերի, մրգային (պտղա-հատապտղային) հումքից օշարակների, էթերայուղային հումքի սպիրտացված թուրմերի եւ սննդային բաղադրիչների ավելացմամբ.

ռոմով պունջ՝ ռոմից պատրաստված լիկյոր-օղու արտադրատեսակ՝ սպիրտացված հյութերի, մրգային (պտղա-հատապտղային) հումքից օշարակների, էթերայուղային հումքի թուրմերի եւ համաբուրավետիչ նյութերի ավելացմամբ.

մրգօղի՝ 18-ից մինչև 20 տոկոս թնդության, 250 գ/լ-ից ոչ պակաս եւ 400 գ/լ-ից ոչ ավելի շաքարի պարունակությամբ, սպիրտացված հյութերից, օշարակներից պատրաստված լիկյոր-օղու արտադրատեսակ՝ սննդային բաղադրիչների ավելացմամբ.

թրմօղի՝ 16-ից մինչև 60 տոկոս թնդության, 300 գ/լ-ից ոչ ավելի շաքարի պարունակությամբ լիկյոր-օղու արտադրատեսակ, որը պատրաստված է սննդային բաղադրիչների օգտագործմամբ.

դառը թրմօղի՝ 25-ից մինչև 60 տոկոս թնդության, լուծամզուքի 30 գ/լ-ից ոչ ավելի ընդհանուր պարունակությամբ թրմօղի, որը պատրաստված է կողմնակի դառնահամ տվող սննդային բաղադրիչների օգտագործմամբ.

կիսաքաղցր թրմօղի՝ 20-ից մինչև 40 տոկոս թնդության, 40 գ/լ-ից ոչ պակաս եւ 100 գ/լ-ից ոչ ավելի շաքարի պարունակությամբ թրմօղի.

քաղցր թրմօղի՝ 16-ից մինչև 29 տոկոս թնդության, 80 գ/լ-ից ոչ պակաս եւ 300 գ/լ-ից ոչ ավելի շաքարի պարունակությամբ թրմօղի.

դեսերտային խմիչք՝ 12-ից մինչև 16 տոկոս թնդության, 140 գ/լ-ից ոչ պակաս եւ 300 գ/լ-ից ոչ ավելի շաքարի պարունակությամբ, կիսաֆաբրիկատներից պատրաստված լիկյոր-օղու արտադրատեսակ՝ սննդային բաղադրիչների ավելացմամբ.

վիսկի` 40 տոկոսից ոչ պակաս թնդության, յուրահատուկ բույրով եւ համով, հացահատիկայինների հատիկի խմորման ենթարկված քաղցուի եւ (կամ) դրանից պատրաստված ածիկի մեկ կամ բազմակի թորմամբ պատրաստված սպիրտային խմիչք` 700 լիտրից ոչ ավելի տարողունակությամբ փայտե տակառներում ոչ պակաս, քան 3 տարվա ընթացքում 94,8 տոկոսից ոչ ավելի թնդության թորվածքի հետագա հնեցմամբ` այն տարախառնելով նախապատրաստված (մշակման ենթարկված) ջրի հետ` շաքարի կուլերի ավելացմամբ կամ առանց դրա.

ռոմ` 37,5 տոկոսից ոչ պակաս թնդության, յուրահատուկ բույրով եւ համով սպիրտային խմիչք, որը պատրաստված է ռոմային թորվածքը նախապատրաստված (մշակման ենթարկված) ջրով նոսրացնելու եղանակով` կաղնուց պատրաստված տարայում հնեցնելով կամ առանց հնեցնելու` շաքարի կուլերի ավելացմամբ կամ առանց դրա.

հացահատիկային հումքից սպիրտային խմիչք` 35-ից մինչեւ 60 տոկոս թնդության, չհնեցված կամ հնեցված հացահատիկային թորվածքներից պատրաստված սպիրտային խմիչք` շաքարի կամ շաքար պարունակող այլ մթերքի, բնական համաբուրավետիչ նյութերի, շաքարի կուլերի, նախապատրաստված (մշակման ենթարկված) ջրի ավելացմամբ կամ առանց դրա.

թույլ ալկոհոլային խմիչքների կատեգորիաներն են`

թույլ ալկոհոլային սպիրտացված խմիչք` թույլ ալկոհոլային խմիչք, որը պատրաստված է խմելու կամ հանքային ջրի, կրկնաթորված էթիլային սպիրտի եւ (կամ) թորվածքների օգտագործմամբ` չավելացնելով կամ ավելացնելով բաղադրիչներ, որոնց օգտագործումը նախատեսված է փաստաթղթով (փաստաթղթերով), որին համապատասխան պատրաստված է ալկոհոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ կամ այլ փաստաթուղթ), այդ թվում` շաքար պարունակող մթերքների եւ համաբուրավետիչ նյութերի ավելացմամբ կամ առանց դրա.

խմորման թույլ ակոհոլային խմիչք՝ 6 տոկոսից ոչ ավելի թնդության թույլ ակոհոլային խմիչք, որը պատրաստված է քաղցուի սպիրտային խմորման, ամբողջական կամ մանրատած հատապտուղների, մրգերի, մեղրի, դրանց քաղցունների ամբողջական կամ ոչ ամբողջական սպիրտային խմորման միջոցով եւ արտադրված է՝ չավելացնելով էթիլային սպիրտ, ինչպես նաեւ չօգտագործելով էթիլային սպիրտ եւ էթիլային սպիրտի ավելացմամբ պատրաստված մթերքներ, չավելացնելով կամ ավելացնելով ածխածնի դիօքսիդ կամ քաղցուի խմորման արդյունքում ածխածնի դիօքսիդով հագեցնելով:

մեղրագինի՝ 1,5-ից մինչեւ 6 տոկոս թնդության, 8 տոկոսից ոչ պակաս մեղր պարունակող քաղցուի սպիրտային խմորման միջոցով պատրաստված խմորման թույլ ակոհոլային խմիչք, քաղցրացնելու համար չօգտագործելով կամ օգտագործելով մեղրի եւ մեղվաբուծության այլ մթերքներ (այդ թվում՝ մեղրախորիսխ, ակնամոմ, զաբբուս, մայր մեղվի կաթ եւ այլն), բուսական հումք, չավելացնելով կամ ավելացնելով շաքար պարունակող բնական մթերքներ, մեղրային քաղցուի խմորման արդյունքում չհագեցնելով կամ հագեցնելով ածխածնի դիօքսիդով:

տանձի սիդր (պերբու)՝ 6 տոկոսից ոչ ավելի թնդության խմորման թույլ ակոհոլային խմիչք՝ պատրաստված տանձի՝ խմորման ենթարկված քաղցուից եւ (կամ) տանձի՝ խմորման ենթարկված վերականգնված հյութից, չավելացնելով կամ ավելացնելով շաքար պարունակող մթերքներ, չհագեցնելով կամ հագեցնելով ածխածնի դիօքսիդով կամ տանձի քաղցուի խմորման արդյունքում ածխածնի դիօքսիդով հագեցնելով՝ մինչեւ 22ում 20 °C ջերմաստիճանի դեպքում ածխածնի դիօքսիդի՝ 100 կՊա-ից ոչ պակաս ճնշման ստացումը:

սիդր՝ 6 տոկոսից ոչ ավելի թնդության խմորման թույլ ակոհոլային խմիչք՝ պատրաստված խնձորի՝ խմորման ենթարկված քաղցուից եւ (կամ) խնձորի՝ խմորման ենթարկված վերականգնված հյութից, չավելացնելով կամ ավելացնելով շաքար պարունակող մթերքներ, չհագեցնելով կամ հագեցնելով ածխածնի դիօքսիդով կամ խնձորի քաղցուի խմորման արդյունքում ածխածնի դիօքսիդով հագեցնելով՝ մինչեւ 22ում 20 °C ջերմաստիճանի դեպքում ածխածնի դիօքսիդի՝ 100 կՊա-ից ոչ պակաս ճնշման ստացումը:

բուրավետացված սիդր՝ բնական համաբուրավետիչ նյութերի ավելացմամբ պատրաստված սիդր.

մրգային սիդր՝ 6 տոկոսից ոչ ավելի թնդության խմորման թույլ ալկոհոլային խմիչք՝ պատրաստված մրգի՝ խմորման ենթարկված քաղցուից եւ (կամ) մրգային՝ խմորման ենթարկված վերականգնված հյութից, չավելացնելով կամ ավելացնելով շաքար պարունակող մթերքներ, չհագեցնելով կամ հագեցնելով ածխածնի դիօքսիդով կամ մրգի քաղցուի խմորման արդյունքում ածխածնի դիօքսիդով հագեցնելով՝ մինչեւ շշում 20 °C ջերմաստիճանի դեպքում ածխածնի դիօքսիդի՝ 100 կՊա-ից ոչ պակաս ճնշման ստացումը.

բուրավետացված մրգային սիդր՝ բնական համաբուրավետիչ նյութերի ավելացմամբ պատրաստված մրգային սիդր.

գինեգործական արտադրանքի կատեգորիաներն են՝

գինի՝ 8,5 տոկոսից (բացառությամբ՝ պաշտպանված աշխարհագրական նշումով գինու կամ ապրանքի ծագման վայրի պաշտպանված անվանումով գինու) մինչեւ 18 տոկոս (բացառությամբ սեղանի գինու) էթիլային սպիրտի ծավալային մասով գինեգործական արտադրանք՝ պատրաստված թարմ խաղողի պտուղների, խաղողի քաղցուի ամբողջական կամ ոչ ամբողջական խմորման արդյունքում՝ չավելացնելով կրկնաթորված էթիլային սպիրտ, ինչպես նաեւ չավելացնելով (բացառությամբ սեղանի գինու) խաղողի կոնցենտրացված քաղցու եւ (կամ) խաղողի կոնցենտրացված կրկնաթորված քաղցու: Պաշտպանված աշխարհագրական նշումով գինին կամ ապրանքի ծագման վայրի պաշտպանված անվանումով գինին կարող է ունենալ էթիլային սպիրտի՝ պատրաստի արտադրանքի ծավալի 4,5 տոկոսից ոչ պակաս ծավալային մաս: Սեղանի գինու մեջ էթիլային սպիրտի ծավալային մասը չպետք է գերազանցի պատրաստի արտադրանքի ծավալի 17 տոկոսը: Հարստացում կամ քաղցրացում թույլատրվում է միայն սեղանի գինու արտադրության ժամանակ: Հարստացման կամ քաղցրացման դեպքում խաղողի կոնցենտրացված քաղցուի եւ (կամ) խաղողի կոնցենտրացված կրկնաթորված քաղցուի ավելացումն իրականացվում է այն

քանակությամբ, որը կարող է պատրաստի արտադրանքում էթիլային սպիրտի ծավալային մասը բարձրացնել 4 տոկոսից ոչ ավելի: Սեղանի գինու արտադրության ժամանակ հարստացումն իրականացվում է ոչ ամբողջական խմորման ենթակված խաղողի քաղցուի կամ գինու մեջ, որում խմորման ընթացքը դեռ չի ավարտվել, խաղողի կոնցենտրացված քաղցու եւ (կամ) խաղողի կոնցենտրացված կրկնաթորված քաղցու ավելացնելու եղանակով, իսկ քաղցրացումը՝ մինչեւ շալցումը տեխնոլոգիական գործընթացի ցանկացած փուլում:

պաշտպանված աշխարհագրական նշումով գինի՝ խաղողի որոշակի սորտից պատրաստված կամ այն փաստաթղթով (փաստաթղթերով), որին համապատասխան պատրաստված է արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ կամ այլ փաստաթուղթ) նախատեսված գինի՝ խաղողի *Vitis vinifera* տեսակի սորտերի խառնուրդից կամ խաղողի այն սորտերի խառնուրդից, որոնք ծագում են *Vitis vinifera* տեսակի խաղողի սորտերը *Vitis* ցեղի խաղողի այլ տեսակների սորտերի հետ խաչասերումից, որում գինու արտադրության համար օգտագործվող խաղողի ամբողջ քանակության առնվազն 85 տոկոսն աճում, վերամշակվում եւ շալցվում է գինու անվանման մեջ նշվող որոշակի աշխարհագրական օբյեկտի սահմաններում, եւ ունի բնահատուկ զգայորոշման հատկություններ, որոնք որոշվում են այդ աշխարհագրական օբյեկտի հողա-կլիմայական առանձնահատկություններով եւ օգտագործվող ագրոտեխնիկական ու տեխնոլոգիական եղանակներով (անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից սահմանվող՝ անդամ պետությունների տարածքում արտադրված գինիների համար)՝ նախատեսված այն փաստաթղթով (փաստաթղթերով), որին համապատասխան պատրաստված է ալկոհոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ կամ այլ փաստաթուղթ):

ապրանքի ծագման վայրի պաշտպանված անվանումով գինի՝ գինի, որը պատրաստված է խաղողի որոշակի սորտից կամ կանոնակարգված է այն

փաստաթղթով (փաստաթղթերով), որին համապատասխան պատրաստված է ալկոհոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ կամ այլ փաստաթուղթ)՝ խաղողի *Vitis vinifera* տեսակի սորտերի խառնուրդից, որն աճում, վերամշակվում է շալցվում է գինու անվանման մեջ նշվող որոշակի աշխարհագրական օբյեկտի սահմաններում, եւ ունի հատկություններ, որոնք որոշվում են տվյալ աշխարհագրական օբյեկտին բնորոշ բնական պայմաններով եւ (կամ) մարդկային գործոնով, օգտագործվող ագրոտեխնիկական եւ տեխնոլոգիական եղանակներով (անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից սահմանվող՝ անդամ պետությունների տարածքում արտադրված գինիների համար)՝ նախատեսված այն փաստաթղթով (փաստաթղթերով), որին համապատասխան պատրաստված է ալկոհոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ կամ այլ փաստաթուղթ)։

բուրավետացված գինի՝ էթիլային սպիրտի 14,5 տոկոսից մինչեւ 22 տոկոս ծավալային մասով գինեգործական արտադրանք, որը պատրաստված է գինուց եւ (կամ) լիկյորային գինուց՝ գինու կրկնաթորված թորվածքի, գինու թորվածքի կամ կրկնաթորված էթիլային սպիրտի, ինչպես նաեւ շաքար պարունակող եւ բնական համաբուրավետիչ նյութերի ավելացմամբ։

հնեցված գինի՝ մինչեւ տարաներում լցնելը (բացառությամբ կաղնու տարայի) առնվազն 12 ամիս պարտադիր հնեցմամբ կամ կաղնու տարայում՝ 6 ամսից ոչ պակաս հնեցմամբ գինի, մինչեւ տարաներում լցնելը առնվազն 18 ամիս պարտադիր հնեցմամբ լիկյորային գինի կամ մրգային գինի, ռեզերվուարային մեթոդով պատրաստված եւ ռեզերվուարում խմորիչներով երկրորդային խմորումն ավարտվելուց հետո առնվազն 6 ամիս հնեցված խաղուն գինի կամ բարձր որակի խաղուն գինի, դասական եղանակով պատրաստված եւ շերտում առնվազն 9 ամիս հնեցված խաղուն գինի կամ բարձր որակի խաղուն գինի։

կոլեկցիոն գինի՝ հնեցված գինի, որը՝ պարտադիր հնեցման ժամկետն ավարտվելուց հետո, առնվազն 3 տարի արտադրողի կողմից լրացուցիչ հնեցվում է շերտում։

լիկյորային գինի՝ էթիլային սպիրտի 15-ից մինչև 22 տոկոս ծավալային մասով, խաղողի ամբողջական կամ մանրատած պտուղների կամ խաղողի քաղցուի ամբողջական կամ ոչ ամբողջական խմորման արդյունքում արտադրված գինեգործական արտադրանք՝ ավելացնելով գինու թորվածք եւ (կամ) գինու կրկնաթորված թորվածք, ավելացնելով կամ չավելացնելով գինու կոնցենտրացված քաղրահյութ, գինու կոնցենտրացված կրկնաթորված քաղցրահյութ: Թարմ խաղողի կամ խաղողի քաղցուի սպիրտային խմորման հաշվին ապահովվող էթիլային սպիրտի ծավալային մասը պետք է լինի 4 տոկոսից ոչ պակաս:

խաղուն գինի՝ էթիլային սպիրտի 8,5-ից մինչև 13,5 տոկոս ծավալային մասով եւ շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի առնվազն 300 կՊա ճնշումով գինեգործական արտադրանք՝ խաղողի քաղցուի ամբողջական կամ ոչ ամբողջական սպիրտային խմորման կամ հերմետիկ անոթներում ճնշման տակ լցվածքով գինու (գինենյութերի) երկրորդային խմորման արդյունքում ածխածնի դիօքսիդով հագեցած, էքսպեդիցիոն լիկյորի ավելացմամբ կամ առանց դրա: Խաղուն գինիներն արտադրվում են դասական մեթոդով՝ շշերում, ռեգերվուարային մեթոդով՝ առանձին խոշոր տարաներում կամ խոշոր ռեգերվուարների համակարգում: Ապրանքի ծագման վայրի պաշտպանված անվանումով խաղուն գինիները կարող են ունենալ էթիլային սպիրտի 6 տոկոսից ոչ պակաս ծավալային մաս:

բարձր որակի խաղուն գինի՝ էթիլային սպիրտի 10,5-ից մինչև 13 տոկոս ծավալային մասով եւ շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի առնվազն 350 կՊա ճնշումով գինի խաղուն՝ խաղողի որոշակի սորտից կամ խաղողի *Vitis vinifera* տեսակի որոշակի սորտերի խառնուրդից պատրաստված լցվածքով գինու (գինենյութերի) երկրորդային խմորման արդյունքում ածխածնի դիօքսիդով հագեցած:

մարգարտային խաղուն գինի՝ էթիլային սպիրտի 9-ից մինչև 12,5 տոկոս ծավալային մասով եւ շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի 100-ից մինչև 250 կՊա ճնշումով գինեգործական արտադրանք՝ խաղողի քաղցուի ամբողջական կամ ոչ ամբողջական սպիրտային խմորման կամ լցվածքով գինու (գինենյութերի) երկրորդային խմորման արդյունքում ածխածնի դիօքսիդով հագեցած:

կոլեկցիոն խաղուն գինի՝ դասական մեթոդով (լցվածքով գինու (գինենյութերի) երկրորդային խմորում շշում) պատրաստված եւ երկրորդային խմորումն ավարտվելուց հետո առնվազն 3 տարի հնեցված բարձր որակի խաղուն գինի.

խաղուն խաղողի շամպայն գինի՝ էթիլային սպիրտի 10,5-ից մինչեւ 13 տոկոս ծավալային մասով եւ շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի առնվազն 350 կՊա ճնշումով, անդամ պետությունների տարածքում արտադրված խաղուն գինի՝ անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից սահմանված ցանկում նշված խաղողի սորտերից հատուկ տեխնոլոգիայով պատրաստված լցվածքով գինու (գինենյութերի)՝ հերմետիկ անոթներում երկրորդային խմորման արդյունքում ածխածնի դիօքսիդով հագեցած.

գազավորված գինի՝ էթիլային սպիրտի 8,5-ից մինչեւ 12,5 տոկոս ծավալային մասով եւ շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի առնվազն 300 կՊա ճնշումով գինի կամ սեղանի գինի՝ լցվածքով գինին ածխածնի դիօքսիդով արհեստականորեն հագեցնելու եղանակով պատրաստված՝ շաքար պարունակող մթերքների (խաղողի կոնցենտրացված քաղցու, խաղողի կոնցենտրացված կրկնաթորված քաղցու, շաքար) ավելացմամբ կամ առանց դրա.

գազավորված մարգարտային գինի՝ էթիլային սպիրտի 8,5-ից մինչեւ 12,5 տոկոս ծավալային մասով եւ շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի առնվազն 100-ից 250 կՊա ճնշումով գինի կամ սեղանի գինի՝ պատրաստված լցվածքով գինին ածխածնի դիօքսիդով արհեստականորեն հագեցնելու եղանակով՝ շաքար պարունակող մթերքների (խաղողի կոնցենտրացված քաղցու, խաղողի կոնցենտրացված կրկնաթորված քաղցու, շաքար) ավելացմամբ կամ առանց դրա.

երիտասարդ գինի՝ սպիրտային խմորման գործընթացն ավարտվելուց հետո 90 օրվա ընթացքում իրացվող գինի եւ սեղանի գինի.

«թաղանթով» գինի՝ գինի, սեղանի գինի, լիկյորային գինի, մրգային գինի, որոնց արտադրության տեխնոլոգիական գործընթացով նախատեսված է քաղցուի ամբողջական խմորումից հետո ձերացում՝ օդի կամ թթվածնի հետ շփումից գինու

մակերեւույթին հատուկ խմորասնկերի միջոցով թաղանթի առաջացմամբ: Գինու թորվածք կամ մրգային թորվածք, խաղողի կոնցենտրացված քաղցու, խաղողի կոնցենտրացված կրկնաթորված քաղցու ավելացնելու դեպքում էթիլային սպիրտի ծավալային մասը կազմում է 15 տոկոսից ոչ պակաս:

սորտային գինի՝ մեկ սորտի խաղողից կամ միեւնույն բուսաբանական տեսակի խաղողի այլ սորտերի (սակայն վերամշակվող խաղողի ընդհանուր ծավալի 15 տոկոսից ոչ ավելի) ավելացմամբ պատրաստված գինի:

հանգիստ գինի՝ գինի, սեղանի գինի, լիկյորային գինի, մրգային գինի՝ պատրաստված առանց ածխածնի դիօքսիդով հագեցման: Հանգիստ գինու մեջ ածխածնի դիօքսիդի կոնցենտրացիան չի գերազանցում մթնոլորտային ճնշմանը հավասարակշիռ կոնցենտրացիան:

մրգային գինի՝ էթիլային սպիրտի 6-ից մինչև 22 տոկոս ծավալային մասով, մեկ կամ մի քանի տեսակի մանրատած թարմ մրգերի կամ մրգային քաղցուի ամբողջական կամ ոչ ամբողջական խմորման արդյունքում արտադրված գինեգործական արտադրանք՝ մասնակի խմորման ենթարկված մրգային քաղցուի մեջ էթիլային սպիրտի բնական ծավալային մասի բարձրացմամբ, ինչպես նաև երիտասարդ գինու մեջ, որը գտնվում է խմորման վիճակում, մինչև 5 տոկոս (մինչև 8 տոկոս՝ Բելառուսի Հանրապետության տարածքում արտադրված՝ Բելառուսի Հանրապետության տարածքում մթերված մրգային հումքից պատրաստված մրգային գինու համար)՝ շաքար պարունակող մթերքներ ավելացնելու միջոցով, կամ լցվածքով մրգային սեղանի գինուց (գինենյութերից) կամ խմորման ենթարկված-սպիրտացված մրգային քաղցուից (խմորման ենթարկված-սպիրտացված մրգային հյութից)՝ էթիլային սպիրտի բնական ծավալային մասի մինչև 5 տոկոս բարձրացմամբ՝ սպիրտացված մրգային քաղցու (սպիրտացված մրգային հյութ), շաքար պարունակող մթերքներ ավելացնելու միջոցով՝ մրգային թորվածքի կամ կրկնաթորված էթիլային սպիրտի ավելացմամբ: Թարմ մրգերի կամ մրգային քաղցուի սպիրտային խմորման հաշվին ապահովվող էթիլային սպիրտի ծավալային մասը պետք է լինի 2 տոկոսից ոչ պակաս:

մրգային սեղանի գինի` էթիլային սպիրտի 6-ից մինչև 15 տոկոս ծավալային մասով, մանրատած թարմ մրգերի (մեկ կամ մի քանի տեսակի) կամ մրգային քաղցուի ամբողջական կամ ոչ ամբողջական խմորման արդյունքում պատրաստված մրգային գինի` քաղցրացմամբ կամ առանց դրա.

թնդեցված մրգային գինի` էթիլային սպիրտի 15-ից մինչև 22 տոկոս ծավալային մասով մրգային գինի, որը պատրաստված է թարմ մրգային քաղցուի կամ մանրատած թարմ մրգերի (մեկ կամ մի քանի տեսակի) սպիրտային խմորման արդյունքում կամ լցվածքով մրգային սեղանի գինուց (գինենյութերից) կամ մրգային խմորման ենթարկված-սպիրտացված քաղցուից (մրգային խմորման ենթարկված-սպիրտացված գինենյութից, սպիրտացված մրգային հյութից), շաքար պարունակող մթերքներից` մրգային թորվածքի եւ (կամ) մրգային սպիրտացված քաղցուի (սպիրտացված մրգային հյութ) ավելացմամբ, կամ սննդային հումքից կրկնաթորված էթիլային սպիրտից, կամ կրկնաթորված մրգային թորվածքից.

թնդեցված բուրավետացված մրգային գինի` բնական համաբուրավետիչ նյութերի կամ համաբուրավետիչ պատրաստուկների ավելացմամբ արտադրված թնդեցված մրգային գինի` շաքար պարունակող նյութերի ավելացմամբ կամ առանց դրա.

հատուկ տեխնոլոգիայի թնդեցված մրգային գինի` թնդեցված մրգային գինի, որն արտադրված է` օգտագործելով այն փաստաթղթով (փաստաթղթերով), որին համապատասխան պատրաստված է ալկոհոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ կամ այլ փաստաթուղթ), նախատեսված տեխնոլոգիական եղանակները, որոնք գինուն տալիս են բնահատուկ զգայորոշման հատկություններ.

մրգային խաղուն գինի` էթիլային սպիրտի 6-ից մինչև 12,5 տոկոս ծավալային մասով եւ 22ում` 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի առնվազն 300 կՊա ճնշումով մրգային գինի` մրգային քաղցուի սպիրտային խմորման կամ լցվածքով մրգային սեղանի գինու (գինենյութերի) երկրորդային խմորման արդյունքում ածխածնի դիօքսիդով հագեցած` շաքար պարունակող մթերքների ավելացմամբ.

մարգարտային մրգային խաղուն գինի՝ շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի 100-ից մինչև 250 կՊա ճնշումով մրգային խաղուն գինի.

գազավորված մրգային գինի՝ էթիլային սպիրտի 6-ից մինչև 12,5 տոկոս ծավալային մասով եւ շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի առնվազն 250 կՊա ճնշումով մրգային սեղանի գինի՝ ածխածնի դիօքսիդով արհեստական հագեցման եղանակով պատրաստված.

գազավորված մարգարտային մրգային գինի՝ շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի 100-ից մինչև 250 կՊա ճնշումով գազավորված մրգային գինի.

բրենդի՝ էթիլային սպիրտի 36 տոկոսից ոչ պակաս ծավալային մասով գինեգործական արտադրանք, որը պատրաստված է բրենդիի համար նախատեսված գինու թորվածքից (կոնյակի թորվածքից)՝ վերջնական արտադրանքում անջուր էթիլային սպիրտի քանակության 50 տոկոսը չգերազանցող քանակությամբ գինու կրկնաթորված թորվածի ավելացմամբ կամ առանց դրա, թորվածքները կաղնու տակառներում կամ պահեստատակառներում առնվազն 1 տարվա կամ առնվազն կես տարվա ընթացքում հնեցնելով, եթե կաղնու տակառների կամ պահեստատակառների տարողունակությունը 1 000 լիտրից պակաս է: Բրենդին չի պարունակում բուրավետիչներ, գույնի լավացման համար թույլատրվում է ավելացնել միայն շաքարի կուլեր.

երեք տարեկան բրենդի՝ էթիլային սպիրտի 40 տոկոսից ոչ պակաս ծավալային մասով, բրենդիի համար նախատեսված գինու թորվածքներից (կոնյակի թորվածքներից) պատրաստված գինեգործական արտադրանք՝ կաղնու փայտանյութի հետ շփման եղանակով առնվազն 3 տարի հնեցմամբ.

չորս տարեկան բրենդի՝ էթիլային սպիրտի 40 տոկոսից ոչ պակաս ծավալային մասով, բրենդիի համար նախատեսված գինու թորվածքներից (կոնյակի թորվածքներից) պատրաստված գինեգործական արտադրանք՝ կաղնու փայտանյութի հետ շփման եղանակով առնվազն 4 տարի հնեցմամբ.

հինգ տարեկան բրենդի՝ Էթիլային սպիրտի 40 տոկոսից ոչ պակաս ծավալային մասով, պատրաստված բրենդիի համար նախատեսված գինու թորվածքներից (կոնյակի թորվածքներից) պատրաստված գինեգործական արտադրանք՝ կաղնու փայտանյութի հետ շփման եղանակով առնվազն 5 տարի հնեցմամբ.

բարձր որակի բրենդի՝ Էթիլային սպիրտի 40-ից մինչև 42 տոկոս ծավալային մասով, բրենդիի համար նախատեսված գինու թորվածքներից (կոնյակի թորվածքներից) պատրաստված գինեգործական արտադրանք՝ կաղնու փայտանյութի հետ շփման եղանակով առնվազն 6 տարի հնեցմամբ.

հնեցված բարձր որակի բրենդի՝ Էթիլային սպիրտի 40-ից մինչև 45 տոկոս ծավալային մասով, բրենդիի համար նախատեսված գինու թորվածքներից (կոնյակի թորվածքներից) պատրաստված բրենդի՝ կաղնու տարայում առնվազն 8 տարի հնեցմամբ.

հին բարձր որակի բրենդի՝ Էթիլային սպիրտի 40-ից մինչև 57 տոկոս ծավալային մասով, բրենդիի համար նախատեսված գինու թորվածքներից (կոնյակի թորվածքներից) պատրաստված բրենդի՝ կաղնու տարայում առնվազն 10 տարի հնեցմամբ.

շատ հին բարձր որակի բրենդի՝ Էթիլային սպիրտի 40-ից մինչև 57 տոկոս ծավալային մասով, բրենդիի համար նախատեսված գինու թորվածքներից (կոնյակի թորվածքներից) պատրաստված բրենդի՝ կաղնու տարայում առնվազն 20 տարի հնեցմամբ.

կոլեկցիոն բարձր որակի բրենդի՝ Էթիլային սպիրտի 40-ից մինչև 45 տոկոս ծավալային մասով, բրենդիի համար նախատեսված գինու թորվածքներից (կոնյակի թորվածքներից) պատրաստված բրենդի՝ առնվազն 6 տարի հնեցմամբ, եւ արտադրողի կողմից՝ առանց հետտարախառնուրդային (հետկուպաժային) հանգիստը հաշվի առնելու՝ կաղնու տարայում առնվազն 3 տարի լրացուցիչ հնեցմամբ.

պաշտպանված աշխարհագրական նշումով բարձր որակի բրենդի՝ բրենդի, որի արտադրությունն իրականացվում է որոշակի աշխարհագրական օբյեկտի սահմաններում, պատրաստված է բրենդիի համար նախատեսված՝ չոր լցվածքով գինու (գինենյութերի) չափազատված թորմամբ ստացված գինու հնեցված թորվածքներից (կոնյակի թորվածքներից), խաղողի *Vitis vinifera* տեսակի սահմանված սորտերից, որոնց 85 տոկոսից ոչ պակասը աճեցված է մշակված է բրենդիի անվանման մեջ նշված որոշակի աշխարհագրական օբյեկտի սահմաններում, ունի հիմնականում այդ աշխարհագրական օբյեկտի հողակլիմայական առանձնահատկություններով պայմանավորված բնահատուկ զգայորոշման հատկություններ՝ այն փաստաթղթում (փաստաթղթերում) նշված ագրոտեխնիկական եւ տեխնոլոգիական եղանակների կիրառմամբ, որին համապատասխան պատրաստված է ալկոհոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ կամ այլ փաստաթուղթ)։

մրգային բրենդի՝ էթիլային սպիրտի 37,5 տոկոսից ոչ պակաս ծավալային մասով գինեգործական արտադրանք, որը պատրաստված է լցվածքով մրգային սեղանի չոր գինու թորմամբ կամ լցվածքով մրգային սեղանի չոր գինու թորմամբ՝ համանման մրգային թորվածք ավելացնելու եղանակով, կամ պատրաստված է մրգային թորվածքից՝ կաղնու տարայում առնվազն կես տարվա ընթացքում հնեցմամբ եւ (կամ) կաղնու փայտանյութի հետ շփման եղանակով՝ հետագայում շաքարի կամ շաքարի կոլերի ավելացմամբ։

կոլեկցիոն մրգային բրենդի՝ էթիլային սպիրտի 37,5 տոկոսից ոչ պակաս ծավալային մասով, մրգային թորվածքից պատրաստված մրգային բրենդի՝ կաղնու փայտանյութի հետ շփման եղանակով առնվազն 6 տարի հնեցմամբ, եւ կաղնու տարայում առնվազն 3 տարի լրացուցիչ հնեցմամբ՝ առանց հետտարախառնուրդային (հետկուպաժային) հանգիստը հաշվի առնելու։

խաղողի օղի (թունդ խմիչք՝ գինու թորվածքից կամ խաղողի ծագման թորվածքից)՝ 37,5 տոկոսից ոչ պակաս թնդության, մեկ կամ մի քանի բաղադրիչներից (այդ թվում՝ գինու թորվածքից, խաղողի ծագման թորվածքից,

գինու կրկնաթորված թորվածքից, խաղողի ծագման կրկնաթորված թորվածքից եւ շաքար պարունակող մթերքներից) պատրաստված գինեգործական արտադրանք, որն ունի օգտագործվող հումքի բույրն ու համը.

մրգային օղի՝ 37,5 տոկոսից ոչ պակաս թնդության, մրգային կրկնաթորված թորվածքից պատրաստված գինեգործական արտադրանք՝ մրգային թորվածքի, շաքար պարունակող մթերքների՝ առանձին կամ համակցված ավելացմամբ, եւ ունի օգտագործվող հումքի բույրն ու համը.

խնձորի հնեցված թորվածքից (կալվադոսային) թունդ խմիչք (կալվադոս)՝ անդամ պետությունների տարածքներում արտադրված, էթիլային սպիրտի 38-ից մինչեւ 40 տոկոս ծավալային մասով գինեգործական արտադրանք, որը պատրաստված է խնձորի հնեցված թորվածքից (կալվադոսային)՝ կաղնու փայտանյութի հետ շփման եղանակով առնվազն 6 ամիս հնեցմամբ.

բրենդիի համար նախատեսված գինու թորվածքից (կոնյակի թորվածքից) թունդ խմիչք (կոնյակ)՝ էթիլային սպիրտի 40 տոկոսից ոչ պակաս ծավալային մասով, կաղնու փայտանյութի հետ շփման եղանակով առնվազն 3 տարի հնեցմամբ, լցվածքով գինու (գինենյութերի) չափազատված թորմամբ ստացված կոնյակի թորվածքներից գինեգործական արտադրանք՝ այն փաստաթղթով (փաստաթղթերով) սահմանված խաղողի սորտերից պատրաստված, որին համապատասխան պատրաստված է ակոնիոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ կամ այլ փաստաթուղթ).

բրենդիի համար նախատեսված գինու թորվածքից (կոնյակի թորվածքից) պատրաստված՝ պաշտպանված աշխարհագրական նշումով թունդ խմիչք (ազգային կոնյակ)՝ որոշակի աշխարհագրական օբյեկտով սահմանափակված արտադրության գինեգործական արտադրանք՝ էթիլային սպիրտի 40 տոկոսից ոչ պակաս ծավալային մասով, որը պատրաստված է որոշակի աշխարհագրական օբյեկտի սահմաններում աճող եւ վերամշակված խաղողի *Vitis vinifera* տեսակի սահմանված սորտերից պատրաստված լցվածքով չոր գինու (գինենյութերի) չափազատված թորմամբ ստացված՝ բրենդիի համար հնեցված գինու

թորվածքներից (կոնյակի հնեցված թորվածքներից), որն ունի գլխավորապես այդ աշխարհագրական օբյեկտի հողա-կլիմայական առանձնահատկություններով պայմանավորված՝ ագրոտեխնիկական եւ տեխնոլոգիական եղանակներով կիրառվող բնահատուկ զգայորոշման հատկություններ: Հայաստանի Հանրապետության մասով՝ բրենդիի համար նախատեսված գինու թորվածքից (կոնյակի թորվածքից) պատրաստված՝ պաշտպանված աշխարհագրական նշումով թունդ խմիչքի (ազգային կոնյակի) արտադրության մեջ թույլատրվում է օգտագործել խաղողի հետեւյալ սորտերը՝ Ոսկեհատ, Մսխալի, Չիլար, Գառան դմակ, Կանգուն, Կախեթ, Լավարի, Ազատենի, Մեղրաբույր, Ռկատեցելի, Բանանց, Մասիս, Վանի, Խինդոդնի (Խնդոդնի), Թոզոտ, Սեւենի եւ Սեւ Արենի՝ օգտագործվող խաղողի ամբողջ զանգվածի 95 տոկոսից ոչ պակաս քանակությամբ:

կոկտեյլ գինուց՝ էթիլային սպիրտի 2,5-ից մինչեւ 8,5 տոկոս ծավալային մասով, 50 տոկոսից ոչ պակաս լցվածքով գինի (գինենյութեր) պարունակող գինեգործական արտադրանք, որը պատրաստված է սննդային հումքից պատրաստված կրկնաթորված էթիլային սպիրտի, եւ (կամ) խաղողի սպիրտացված քաղցուի (միստել), եւ (կամ) գինու կրկնաթորված թորվածքի, եւ (կամ) շաքար պարունակող մթերքների, եւ (կամ) բուրավետիչների, ներկանյութերի, եւ (կամ) ջրի ավելացմամբ կամ առանց դրա, ածխածնի դիօքսիդով հագեցմամբ կամ առանց դրա, շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի 100-ից մինչեւ 250 կՊա ճնշումով:

գինու խմիչք՝ էթիլային սպիրտի 7-ից մինչեւ 22 տոկոս ծավալային մասով գինեգործական արտադրանք՝ ածխածնի դիօքսիդով հագեցմամբ կամ առանց դրա, որը պարունակում է 50 տոկոսից ոչ պակաս գինի եւ (կամ) խաղողի քաղցու, պատրաստված է սննդային հումքից պատրաստված՝ կրկնաթորված էթիլային սպիրտի, գինու թորվածքի, գինու կրկնաթորված թորվածքի, խաղողի սպիրտացված քաղցուի (միստելի), շաքար պարունակող մթերքների, բնական համաբուրավետիչ նյութերի, սննդային ներկանյութերի ավելացմամբ կամ առանց դրա:

բուրավետացված գինու խմիչք՝ էթիլային սպիրտի 7-ից մինչև 22 տոկոս ծավալային մասով, լցվածքով սեղանի գինուց (գինենյութերից) պատրաստված գինու խմիչք՝ գինու թորվածքի, սննդային հումքից պատրաստված՝ կրկնաթորված էթիլային սպիրտի կամ խաղողի ծագման կրկնաթորված թորվածքի, գինու կրկնաթորված թորվածքի, շաքար պարունակող մթերքների, բնական համաբուրավետիչ նյութերի ավելացմամբ.

գազավորված գինու խմիչք՝ էթիլային սպիրտի 8,5-ից մինչև 12,5 տոկոս ծավալային մասով գինու խմիչք՝ լցվածքով գինին ածխածնի դիօքսիդով հագեցմամբ, շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի առնվազն 300 կՊա ճնշումով.

գազավորված մարգարտային գինու խմիչք՝ էթիլային սպիրտի 8,5-ից մինչև 12,5 տոկոս ծավալային մասով էլ շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի 100-ից մինչև 250 կՊա ճնշումով գազավորված գինու խմիչք.

մրգային գինու խմիչք՝ էթիլային սպիրտի 9-ից մինչև 22 տոկոս ծավալային մասով, ածխածնի դիօքսիդով հագեցմամբ կամ առանց դրա գինեգործական արտադրանք, որը պարունակում է 30 տոկոսից ոչ պակաս լցվածքով մրգային գինի (գինենյութեր), էլ (կամ) խմորման ենթարկված, սպիրտացված մրգային քաղցու (խմորման ենթարկված, սպիրտացված մրգային գինենյութ), էլ (կամ) վերականգնված, խմորման ենթարկված, սպիրտացված մրգային քաղցու (խմորման ենթարկված սպիրտացված մրգային գինենյութ)՝ սպիրտացված մրգային քաղցուի (հյութի), կրկնաթորված էթիլային սպիրտի, մրգային թորվածքի, մրգային կրկնաթորված թորվածքի, շաքար պարունակող մթերքների, ներկանյութերի, բնական համաբուրավետիչ նյութերի ավելացմամբ կամ առանց դրա.

բուրավետացված մրգային գինու խմիչք՝ էթիլային սպիրտի 15 տոկոսից ոչ պակաս ծավալային մասով, բնական համաբուրավետիչ նյութերի ավելացմամբ պատրաստված մրգային գինու խմիչք.

գազավորված մրգային գինու խմիչք՝ էթիլային սպիրտի 9-ից մինչև 12,5 տոկոս ծավալային մասով, լցվածքով սեղանի մրգային գինուց պատրաստված մրգային գինու խմիչք՝ ածխածնի դիօքսիդով հագեցմամբ, շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի առնվազն 300 կՊա ճնշումով.

Վերնուտ` բուրավետացված գինի, որում բնահատուկ զգայորոշման հատկությունները ստացվում են հիմնականում օշինդրում (Artemisia) պարունակվող թրմելու եւ (կամ) թթվամշակելու միջոցով ստացված նյութերի օգտագործմամբ: Քաղցրացման համար օգտագործվում է միայն կարամելացված շաքար, սպիտակ շաքար, շաքարավազ, գուլած շաքարավազ, խաղողի քաղցու, խաղողի կոնցենտրացված քաղցու.

մրգեր գինու մեջ (մրգեր մրգային գինու մեջ)` էթիլային սպիրտի 15-ից մինչեւ 22 տոկոս ծավալային մասով գինեգործական արտադրանք, որում պարունակվող մրգերի զանգվածային բաժինը կազմում է 20-ից 60 տոկոս, վրան գինի (մրգային գինի) լցված.

խաղողի թունդ խմիչք` էթիլային սպիրտի 22-ից մինչեւ 55 տոկոս ծավալային մասով, խաղողի ծագման թորվածքից, եւ (կամ) խաղողի ծագման կրկնաթորված թորվածքից, եւ (կամ) գինու թորվածքից պատրաստված գինեգործական արտադրանք` շաքար պարունակող մթերքների, բնական համաբուրավետիչ նյութերի ավելացմամբ կամ առանց դրա.

գինու թունդ խմիչք (կոնյակի թորվածքից)` էթիլային սպիրտի 35-ից մինչեւ 45 տոկոս ծավալային մասով, կաղնու փայտանյութի հետ շփման եղանակով առնվազն 3 տարի հնեցմամբ գինու թորվածքը (կոնյակի թորվածքը) եւ կրկնաթորված էթիլային սպիրտը տարախառնելու միջոցով պատրաստված գինեգործական արտադրանք` շաքարի, կիտրոնաթթվի, կաղնու լուծամզուքի ավելացմամբ, եւ պատրաստի արտադրանքը հետագայում առնվազն 1 ամսվա ընթացքում հնեցմամբ (հանգստով): Գինու թորվածքի (կոնյակի թորվածքի) բաժինը պատրաստի արտադրանքի տարախառնուրդի (կուպաժի) ընդհանուր քանակության մեջ պետք է լինի 35 տոկոսից ոչ պակաս.

մրգային թունդ խմիչք` 22-ից մինչեւ 55 տոկոս թնդության, մրգային թորվածքներից` շաքար պարունակող մթերքների ավելացմամբ կամ առանց դրա պատրաստված գինեգործական արտադրանք, որն ունի օգտագործվող հումքի բույրը եւ համը.

թորվածքների կատեգորիաներն են`

խաղողի ծագման թորվածք՝ էթիլային սպիրտի 52-ից մինչև 86 տոկոս ծավալային մասով թորվածք, որը պատրաստված է խմորման ենթարկված խաղողի մզվածքների, խմորիչային նստվածքների, թանձրուկային նստվածքների, չամիչի՝ առանձին կամ համակցված թորում իրականացնելու միջոցով.

խաղողի ծագման կրկնաթորված թորվածք՝ էթիլային սպիրտի 86-ից մինչև 96 տոկոս ծավալային մասով, խմորման ենթարկված խաղողի մզվածքների, խմորիչային նստվածքների, թանձրուկային նստվածքների, խաղողի ծագման թորվածքի՝ թորում եւ (կամ) կրկնաթորում իրականացնելու միջոցով պատրաստված թորվածք.

գինու թորվածք՝ էթիլային սպիրտի 52-ից 86 տոկոս ծավալային մասով, լցվածքով չոր գինին (գինենյութերը) թորելու միջոցով պատրաստված թորվածք՝ գինու թորվածքի կամ գինու կրկնաթորված թորվածքի ավելացմամբ, որն ունի օգտագործվող հումքի բույրն ու համը.

բրենդիի համար նախատեսված գինու թորվածք (կոնյակի թորվածք)՝ էթիլային սպիրտի 55-ից 72,4 տոկոս ծավալային մասով գինու թորվածք, որը պատրաստված է խաղողի *Vitis vinifera* տեսակի՝ այն փաստաթղթով (փաստաթղթերով), որին համապատասխան պատրաստված է ալկոհոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ կամ այլ փաստաթուղթ), սահմանված սորտերից պատրաստված լցվածքով չոր գինին (գինենյութերը) կամ չորացման աստիճանի խմորման ենթարկված՝ էթիլային սպիրտի 7,5 տոկոսից ոչ պակաս ծավալային մասով խաղողի քաղցուն չափազատված թորելու միջոցով, գտնվում է կաղնու փայտանյութի հետ մշտական շփման մեջ կամ առնվազն 1 000 դմ³ տարողությամբ կաղնու տարայում՝ առնվազն 1 տարի, կամ կես տարի՝ առնվազն 1 000 դմ³ տարողությամբ կաղնու տակառներում, կամ չի գտնվում կաղնու փայտանյութի հետ շփման մեջ: Հայաստանի Հանրապետության մասով՝ պաշտպանված աշխարհագրական նշումով (ազգային կոնյակ)՝ բրենդիի համար գինու թորվածքից (կոնյակի թորվածքից) թունդ խմիչքի արտադրության մեջ թույլատրվում է

օգտագործել խաղողի հետեւյալ սորտերը՝ Ոսկեհատ, Մսխալի, Չիլար, Գառան դմակ, Կանգուն, Կախեթ, Լավարի, Ազատենի, Մեղրաբույր, Ռկատեցելի, Բանանց, Մասիս, Վանի, Խինդոդնի (Խնդոդնի), Թոզոտ, Սեւենի եւ Սեւ Արենի՝ օգտագործվող խաղողի ամբողջ զանգվածի 95 տոկոսից ոչ պակաս քանակությամբ.

բրենդիի համար հնեցված գինու թորվածք՝ բրենդիի համար նախատեսված գինու թորվածք (կոնյակի թորվածք)՝ էթիլային սպիրտի 55-ից 72,4 տոկոս ծավալային մասով, բրենդիի համար նախատեսված երիտասարդ գինու թորվածքի հնեցմամբ պատրաստված, հնեցման ամբողջ ժամանակահատվածում կաղնու փայտանյութի հետ մշտապես շփմամբ.

բրենդիի համար նախատեսված երիտասարդ գինու թորվածք՝ էթիլային սպիրտի 62-ից 72,4 տոկոս ծավալային մասով՝ բրենդիի համար նախատեսված գինու թորվածք (կոնյակի թորվածք), որը չի ենթարկվել կաղնու փայտանյութի հետ շփման եղանակով հնեցման.

գինու կրկնաթորված թորվածք՝ էթիլային սպիրտի 86 տոկոսից ավելի ծավալային մասով թորվածք, որը պատրաստված է լցվածքով չոր գինին (գինենյութերը), կամ չորացման աստիճանի խմորման ենթարկված՝ էթիլային սպիրտի 7,5 տոկոսից ոչ պակաս ծավալային մասով խաղողի քաղցուն, կամ գինու թորվածքը թորելու եւ (կամ) կրկնաթորելու միջոցով.

վիսկիի թորվածք՝ թորվածք՝ ստացված խմորման ենթարկված հացահատիկայինների հատիկի քաղցուի եւ (կամ) դրանից պատրաստված ածիկի մեկ կամ բազմակի անգամ թորումով՝ էթիլայի սպիրտի 94,8 տոկոսից ոչ ավելի պարունակությամբ թորվածքի հետագա հնեցմամբ 700 լիտրից ոչ ավելի տարողությամբ կաղնու տարայում՝ առնվազն 3 տարի.

հացահատիկային թորվածք՝ թորվածք՝ ստացված խմորման ենթարկված հացահատիկայինների հատիկի քաղցուի եւ (կամ) դրանից պատրաստված ածիկի մեկ կամ բազմակի թորմամբ՝ մինչեւ 94,8 տոկոսից ոչ ավելի թնդության՝ պահպանելով օգտագործված հումքի բույրը եւ համը.

մեղրային թորվածք՝ էթիլային սպիրտի 52-ից մինչև 86 տոկոս ծավալային մասով թորվածք, որը պատրաստված է խմորման ենթարկված մեղրային քաղցուի, կամ լցվածքով սեղանի մեղրային գինու խմիչքի, կամ մեղրային թնդեցված գինու խմիչքի թորմամբ.

ռոմային թորվածք՝ էթիլային սպիրտի 96 տոկոսից ոչ ավելի ծավալային մասով թորվածք, որը պատրաստված է եղեգնաշաքարի վերամշակման արդյունքներից ստացված՝ խմորման ենթարկված քաղցուի թորմամբ.

մրգային թորվածք՝ էթիլային սպիրտի 52-ից մինչև 86 տոկոս ծավալային մասով թորվածք, որը պատրաստված է լցվածքով սեղանի մրգային չոր գինու (գինենյութերի), խմորման ենթարկված մրգային մզվածքների, խմորիչային նստվածքների, թանձրուկային նստվածքների թորմամբ: Մրգային թորվածքն իր անվանման մեջ կարող է պարունակել այն մրգի տեսակի անվանումը, որից պատրաստվել է (օրինակ՝ սալորի թորվածք).

մրգային կրկնաթորված թորվածք՝ էթիլային սպիրտի 86 տոկոսից ավելի ծավալային մասով թորվածք, որը պատրաստված է խմորման ենթարկված պտղային քուսպի, խմորման ենթարկված՝ թարմ պտուղներից մրգային քաղցուի (լցվածքով մրգային սեղանի չոր գինու (գինենյութերի)), խմորման ենթարկված պտղային մզվածքների, խմորիչային նստվածքների, թանձրուկային նստվածքների, մրգային թորվածքների՝ առանձին կամ համակցված թորմամբ կամ կրկնաթորմամբ.

հնեցված խնձորի թորվածք (կալվադոսային)՝ էթիլային սպիրտի 55-ից 70 տոկոս ծավալային մասով խնձորի թորվածք, որն ստացվել է երիտասարդ խնձորի թորվածքը հնեցման ամբողջ ժամանակահատվածում կաղնու փայտանյութի հետ մշտապես շփման եղանակով հնեցմամբ.

խնձորի բրենդիի համար նախատեսված երիտասարդ խնձորի թորվածք՝ էթիլային սպիրտի 62-ից 70 տոկոս ծավալային մասով մրգային թորվածք, որը պատրաստված է լցվածքով խնձորի սեղանի չոր գինին (գինենյութերը) թորելու միջոցով, չի ենթարկվել հնեցման՝ կաղնու փայտանյութի հետ շփման եղանակով.

գարեջրագործական արտադրանքի կատեգորիաներն են՝

գարեջուր՝ գարեջրի քաղցուի խմորման արդյունքում առաջացած էթիլային սպիրտի պարունակությամբ ալկոհոլային արտադրանք, որը պատրաստված է գարեջրագործական ածիկից, հատուկ գարեջրագործական ածիկից, գայլուկից եւ (կամ) գայլուկի վերամշակման արդյունքում ստացված մթերքներից (գայլուկի մթերքներ), նախապատրաստված (մշակման ենթարկված) ջրից՝ գարեջրային խմորասնկերի օգտագործմամբ, առանց էթիլային սպիրտ, բուրավետիչներ եւ սննդային հավելումներ ավելացնելու՝ բացառությամբ թիվ 4 հավելվածի 8-րդ աղյուսակում նշվածների: Գարեջրագործական ածիկի մասնակի փոխարինումը հացահատիկով եւ (կամ) դրա վերամշակման արդյունքներով (հացահատակային մթերքներով) թույլատրվում է՝ պայմանով, որ դրանց ընդհանուր զանգվածը չի գերազանցի փոխարինվող ածիկի զանգվածի 50 տոկոսը, իսկ շաքար պարունակող մթերքների զանգվածը՝ ածիկի, հացահատիկի եւ հացահատիկային մթերքների զանգվածի 5 տոկոսից ոչ ավելին:

գարեջուր ցորենից՝ գարեջրագործական ցորենի ածիկից եւ (կամ) հատուկ ցորենի ածիկից պատրաստված գարեջուր՝ հումքի եւ գարեջրագործական գարու ածիկի ընդհանուր զանգվածի 50 տոկոսից ոչ պակաս ցորենի ածիկի պարունակությամբ: Գարեջրագործական գարու ածիկի մասնակի փոխարինումը հացահատիկով եւ (կամ) դրա վերամշակման արդյունքներով (հացահատակային մթերքներով) թույլատրվում է՝ պայմանով, որ դրանց ընդհանուր զանգվածը չի գերազանցի փոխարինվող գարեջրագործական գարու ածիկի զանգվածի 20 տոկոսը, իսկ շաքար պարունակող մթերքների զանգվածը՝ գարեջրագործական գարու ածիկի, հացահատիկի եւ հացահատիկային մթերքների զանգվածի 10 տոկոսը:

գարեջրի հիմքով պատրաստվող խմիչքներ (գարեջրային խմիչքներ)՝ գարեջրի քաղցուի խմորման ընթացքում առաջացած էթիլային սպիրտի 7 տոկոսից ոչ ավելի ծավալային մասով գարեջրագործական արտադրանք, որը պատրաստված է գարեջրից (պատրաստի արտադրանքի ծավալի 40 տոկոսից

ոչ պակաս) եւ (կամ) գարեջրագործական ածիկից պատրաստված գարեջրի քաղցուից (հումքի զանգվածի 40 տոկոսից ոչ պակաս), նախապատրաստված (մշակման ենթարկված) ջրից, չավելացնելով կամ ավելացնելով հացահատիկային մթերքներ, շաքար պարունակող մթերքներ, գայլուկ եւ (կամ) գայլուկի մթերքներ, մրգային (պտուղ-հատապտղային) եւ այլ բուսական հումք, դրանց վերամշակումից ստացված մթերքներ, բուրավետիչներ, սննդային հավելումներ, որոնք թույլատրված են գարեջրի համար Եվրասիական տնտեսական միության խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի թիվ 58 որոշմամբ ընդունված՝ Մաքսային միության «Սննդային հավելումներին, բուրավետիչներին եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջները» տեխնիկական կանոնակարգին (ՄՄ ՏԿ 029/2012) (այսուհետ՝ Մաքսային միության «Սննդային հավելումներին, բուրավետիչներին եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջները» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 029/2012)) համապատասխան, առանց էթիլային սպիրտի ավելացման.

մեղրագործական արտադրանքի կատեգորիաներն են.

մեղրային ալկոհոլային խմիչք՝ էթիլային սպիրտի 8,5-ից 22 տոկոս ծավալային մասով մեղրագործական արտադրանք, որը պատրաստված է մեղրային քաղցուի ամբողջական կամ ոչ ամբողջական սպիրտային խմորման արդյունքում, չավելացնելով կամ ավելացնելով կրկնաթորված էթիլային սպիրտ, մեղրային թորվածք, մրգային թորվածք, մեղր, կոնցենտրացված մրգային հյութ, կարամելացված շաքար՝ գույնն ուղղելու համար, հազեցնելով կամ չհազեցնելով ածխածնի դիօքսիդով, ունի մեղրի գերիշխող բույր եւ համ: Թույլատրվում է մինչեւ 30 տոկոս թարմ մրգային քաղցուների, սպիրտացված մրգային հյութերի օգտագործումը.

մեղրային գազավորված ալկոհոլային խմիչք՝ էթիլային սպիրտի 8,5-ից մինչեւ 12,5 տոկոս ծավալային մասով, շշում՝ 20°C ջերմաստիճանում ածխածնի դիօքսիդի առնվազն 300 կՊա ճնշումով մեղրագործական արտադրանք, որը պատրաստված է մեղրային սեղանի գինու խմիչքը ածխածնի դիօքսիդով արհեստականորեն հազեցնելու եղանակով.

մեղրային թնդեցված ալկոհոլային խմիչք՝ էթիլային սպիրտի 17-ից 22 տոկոս ծավալային մասով մեղրագործական արտադրանք, որը պատրաստված է մեղրային քաղցուի ամբողջական կամ ոչ ամբողջական խմորման արդյունքում՝ չավելացնելով կամ ավելացնելով մեղր, կամ պատրաստված է մեղրի խմորման ենթարկված քաղցուից՝ չավելացնելով կամ ավելացնելով կոնցենտրացված մրգային հյութ, ավելացնելով կրկնաթորված էթիլային սպիրտ, մրգային թորվածք, մեղրային թորվածք: Թույլատրվում է օգտագործել մինչև 30 տոկոս թարմ մրգային քաղցու եւ (կամ) սպիրտացված կամ խմորման ենթարկված-սպիրտացված մրգային հյութ, եւ (կամ) վերականգնված մրգային հյութ:

մեղրային դեսերտային ալկոհոլային խմիչք՝ էթիլային սպիրտի 15-ից 17 տոկոս ծավալային մասով մեղրագործական արտադրանք, որը պատրաստված է մեղրային քաղցուի ամբողջական կամ ոչ ամբողջական խմորման արդյունքում՝ չավելացնելով կամ ավելացնելով մեղր, կամ պատրաստված է մեղրի խմորման ենթարկված քաղցուից՝ չավելացնելով կամ ավելացնելով կոնցենտրացված մրգային հյութ, ավելացնելով կրկնաթորված էթիլային սպիրտ, մրգային թորվածք, մեղրային թորվածք: Թույլատրվում է օգտագործել մինչև 30 տոկոս թարմ մրգային քաղցու եւ (կամ) սպիրտացված եւ (կամ) խմորման ենթարկված-սպիրտացված մրգային հյութ, եւ (կամ) վերականգնված մրգային հյութ:

ալկոհոլային խմիչք մեղրային նեկտար՝ 22 տոկոսից ոչ պակաս թնդության սպիրտային խմիչք, որը պատրաստված է խմորման ենթարկված մեղրային քաղցուի եւ մեղրային թորվածքի եւ (կամ) կրկնաթորված էթիլային սպիրտի՝ պատրաստի մթերքի ծավալի 30 տոկոսից ոչ պակաս խմորման ենթարկված՝ մեղրային քաղցու պարունակող խառնուրդի բուրավետացման միջոցով՝ բնական համաբուրավետիչ նյութերի եւ մեղրի ավելացմամբ:

մեղրային սեղանի ալկոհոլային խմիչք՝ էթիլային սպիրտի 8,5-ից 15 տոկոս ծավալային մասով մեղրագործական արտադրանք, որը պատրաստված է մեղրային քաղցուի ամբողջական կամ ոչ ամբողջական սպիրտային խմորման արդյունքում, հետագայում ավելացնելով կամ չավելացնելով մեղր: Թույլատրվում է մեղրային քաղցուի մեջ ավելացնել մինչև 30 տոկոս թարմ մրգային քաղցու եւ (կամ) վերականգնված մրգային հյութեր:

թունդ մեղրային խմիչք՝ 22-ից 55 տոկոս թնդության մեղրագործական արտադրանք, որը պատրաստված է պատրաստի մթերքի ծավալի առնվազն 30 տոկոսը կազմող մեղրային քաղցուի խմորման արդյունքում՝ մեղրային թորվածքի, կրկնաթորված էթիլային սպիրտի ավելացմամբ, մեղրի, բնական համաբուրավետիչ նյութերի ավելացմամբ կամ առանց դրա, ունի մեղրի համ եւ մեղրի գերիշխող բույր.

մեղրային օղի՝ 35-ից 55 տոկոս թնդության, խմորման ենթարկված մեղրային քաղցուն թորելու եղանակով պատրաստված ակոհոլային արտադրանք՝ գույնի ուժգնացման համար հետագայում մեղրի եւ (կամ) շաքարի կուլերի ավելացմամբ կամ առանց դրա, որն ունի մեղրի բույր եւ համ.

սպիրտ պարունակող սննդամթերքի կատեգորիաներն են՝

բուրավետ սպիրտ՝ սպիրտ պարունակող սննդային արտադրանք, որը լիկյոր-օղու արտադրության 60-ից 80 տոկոս թնդության կիսաֆաբրիկատ է, որը պարունակում է համաբուրավետիչ նյութեր, պատրաստված է բուսական հումքի սպիրտացված թուրմերի, սպիրտացված հյութերի եւ մրգային (պտուղ-հատապտղային) հումքից օշարակների, եթերայուղերի ջրա-սպիրտային լուծույթների, մեղրի, ակնամումի, եթերայուղային եւ այլ համաբուրավետիչ հումքի թորմամբ.

սպիրտացված հյութեր՝ լիկյոր-օղու արտադրատեսակների պատրաստման համար նախատեսված 25 տոկոս թնդության, ոչ ակոհոլային ըմպելիքների պատրաստման համար նախատեսված 16 տոկոս թնդության եւ գետնամորուց (ելակից) սպիրտացված հյութ պատրաստելու համար նախատեսված 20 տոկոս թնդության սպիրտ պարունակող սննդային արտադրանք, որը պատրաստված է մրգային հյութից՝ կրկնաթորված էթիլային սպիրտի ավելացմամբ.

սպիրտացված օշարակ՝ 24 տոկոսից ոչ պակաս թնդության (11 տոկոսից ոչ պակաս՝ լոռամրգից օշարակի համար) սպիրտ պարունակող սննդային արտադրանք, որը պատրաստված է լուծվող նյութերը թարմ կամ չորացրած մրգերից 24-ից 60 տոկոս թնդության ջրասպիրտային լուծույթով լուծահանելու միջոցով.

սպիրտացված թուրմեր՝ սպիրտ պարունակող սննդային արտադրանք, ալկոհոլային արտադրության կիսաֆաբրիկատ՝ պատրաստված թարմ կամ չորացրած բարկահամ բուրավետ եւ (կամ) ոչ բուրավետ բուսական հումքից՝ լուծվող նյութերը 40-ից 90 տոկոս թնդության ջրասպիրտային լուծույթով լուծահանելու միջոցով.

խաղողի սպիրտացված քաղցու (միստել)՝ էթիլային սպիրտի 12-ից 25 տոկոս ծավալային մասով՝ սպիրտ պարունակող սննդային արտադրանք, որը պատրաստված է խաղողի սպիրտացված քաղցուի (միստելի) ծավալի 14 տոկոսից ոչ պակաս շաքարի պարունակությամբ խաղողի քաղցուից՝ կրկնաթորված էթիլային սպիրտի եւ (կամ) գինու թորվածքի ավելացմամբ.

խմորման ենթարկված սպիրտացված մրգային քաղցու (խմորման ենթարկված սպիրտացված մրգային գինենյութ)՝ էթիլային սպիրտի 16 տոկոս ծավալային մասով կիսաֆաբրիկատ, որը պատրաստված է մրգային քաղցուի կամ մանրատած մրգերի սպիրտային խմորման արդյունքում՝ մինչեւ բնական թորման էթիլային սպիրտի 5 տոկոսից ոչ պակաս ծավալային մասը, հետագայում ավելացնելով կրկնաթորված էթիլային սպիրտ, մրգային կրկնաթորված թորվածք, մրգային թորվածք, նախատեսված է գինեգործական արտադրանքի տարբեր տեսակների արտադրության համար եւ ենթակա չէ սպառողին որպես պատրաստի մթերք իրացնելու համար.

սպիրտացված մրգային քաղցու՝ էթիլային սպիրտի 15-ից 25 տոկոս ծավալային մասով, մրգային քաղցուից պատրաստված կիսաֆաբրիկատ՝ կրկնաթորված էթիլային սպիրտի, եւ (կամ) մրգային թորվածքի, եւ (կամ) մրգային կրկնաթորված թորվածքի ավելացմամբ.

խմորման ենթարկված մրգային գինենյութեր՝ սպիրտ պարունակող սննդային արտադրանք՝ 5-ից 8,5 տոկոս թնդության, պատրաստված մրգային քուսպը կամ թարմ մրգերից մրգային քաղցուն խմորման ենթարկելու միջոցով, ավելացնելով կամ չավելացնելով շաքար.

այլ հասկացություններ՝

բուրավետացում՝ համաբուրավետիչ նյութերի՝ այդ թվում նաև բնական, նյութերի եւ պատրաստուկների հավելման միջոցով ալկոհոլային արտադրանքին որոշակի բույր հաղորդելու համար նախատեսված տեխնոլոգիական եղանակ.

ասամբյաժ (բլենդինգ, էգալիզացում)՝ ֆիզիկաքիմիական եւ (կամ) զգայորոշման բնութագրերով տարբերվող նույն տեսակի ալկոհոլային արտադրանքի միախառնման տեխնոլոգիական գործընթաց, կազմությամբ միատարր՝ նույն տեսակի ալկոհոլային արտադրանք ստանալու նպատակով.

բազմաթորում՝ խմորվող քաղցուից կրկնաթորված էթիլային սպիրտի ստացման գործընթաց՝ բազմաթորման կայանքի միջոցով ուղեկցող ցնդող խառնուկներից դրա հետագա մաքրմամբ.

խմորման խառնուրդ՝ կիսաֆաբրիկատ, որը նախատեսված է ռեգերվուարային մեթոդով խաղուն գինի, խաղողի խաղուն շամպայն գինի եւ մարգարտային խաղուն գինի պատրաստելիս երկրորդային խմորման համար եւ, որը պատրաստված է տիրաժային (ռեգերվուարային) լիկյորի եւ խմորասնկերի մաքուր կուլտուրայի մերանի հավելմամբ գտում անցած՝ գինենյութի մշակված տարախառնուրդներից (կուպաժներից).

խաղող՝ *Vitis vinifera* տեսակին պատկանող կամ *Vitis vinifera* տեսակի խաղողի սորտերի՝ *Vitis* ցեղատեսակի այլ սորտերի հետ խաչասերումից առաջացող խաղողի որթի պտուղներ, որոնք տեխնիկական հասունության փուլում կամ մի փոքր թառամեցված վիճակում օգտագործվում են գինեգործական արտադրանքի պատրաստման համար, ունակ են սպիրտային խմորման.

նախապատրաստված (մշակման ենթարկված) ջուր՝ սույն տեխնիկական կանոնակարգի թիվ 2 հավելվածի 6-րդ աղյուսակով սահմանված՝ հանքային եւ օրգանական նյութերի պարունակության մակարդակով ջուր, որը ենթարկվել է խմելու ջրի փափկացման, ապահանքայնացման, հոտազերծման, աղազերծման, երկաթազերծման, գտման եւ այլ եղանակներով նախապատրաստման: Թույլատրվում է ջրի նախապատրաստման տարբեր եղանակների միաժամանակյա կիրառում.

հատուկ նախապատրաստված (մշակման ենթարկված) ջուր՝ ապրանքի ծագման վայրի պաշտպանված անվանմամբ ալկոհոլային արտադրանքի արտադրության մեջ կիրառվող եւ մտավոր սեփականության ոլորտում անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված կարգով գրանցված տեխնոլոգիայի համաձայն լրացուցիչ մշակում անցած՝ նախապատրաստված (մշակման ենթարկված) ջուր.

հնեցում, հասունացում՝ տեխնոլոգիական հրահանգներով սահմանված այնպիսի ժամանակահատվածում՝ կարգավորվող պայմաններում ալկոհոլային արտադրանքը պահպանելու տեխնոլոգիական եղանակ, որի ընթացքում ապահովվում է ֆիզիկաքիմիական, կենսաքիմիական կամ մանրէաբանական կերպափոխությունների ընթանալը, որոնց արդյունքում ալկոհոլային արտադրանքը ձեռք է բերում նոր հատկություններ եւ բնութագրեր.

ալկոհոլային արտադրանքը շրջանառության մեջ դնելը՝ անհատույց եւ հատուցելի հիմքով՝ կոմերցիոն գործունեության ընթացքում անդամ պետությունների տարածքում տարածման նպատակով ալկոհոլային արտադրանքի մատակարարում կամ ներմուծում (այդ թվում՝ առաքում արտադրողի պահեստից կամ բեռնառաքում առանց պահեստավորման).

աշխարհագրական նշում՝ նշում, որը նույնականացնում է ալկոհոլային արտադրանքը որպես անդամ պետության տարածքից կամ այդ տարածքի շրջանից կամ տեղանքից ծագող, ինչպես նաեւ որպես այլ աշխարհամասերի արտադրանք, որտեղ ալկոհոլային արտադրանքի կոնկրետ որակը, համբավը կամ այլ բնութագրեր զգալիորեն կապված են դրա աշխարհագրական ծագման հետ.

էթիլային սպիրտի գլխավոր ֆրակցիա՝ խմորվող քաղցուի բազմաթորման կամ ցնդող օրգանական խառնուկների բարձր կոնցենտրացիա պարունակող էթիլային սպիրտահումքի կրկնաթորման ժամանակ առաջացող՝ սպիրտի արտադրության կողմնակի արգասիք.

գարեջրային խմորասնկեր՝ Saccharomycetaceae ընտանիքին եւ Saccharomyces carlsbergensis եւ Saccharomyces cerevisiae ցեղատեսակին պատկանող խմորասնկեր.

խմորասնկային մերան՝ խմորման համար մատակարարվող քաղցուի կամ քուսպի ածխաջրերի խմորման համար բավարար քանակությամբ խմորասնկերի մաքուր կուլտուրայի ակտիվ բջիջների կենսազանգված.

մաքուր կուլտուրայի խմորասնկեր՝ մեկ բջիջից գոյացող եւ սելեկցիայի եղանակով հատուկ ընտրված խմորասնկեր՝ կոնկրետ տեսակի ալկոհոլային արտադրանքի արտադրության համար.

հասուն խմորվող քաղցու՝ հետագա թորման կամ բազմաթորման համար օգտագործվող բազմաբաղադրիչ խառնուրդ, որն ստացվել է քաղցուն օսլա կամ շաքար պարունակող հումքից խմորասնկերով խմորելու պրոցեսում, եւ որը բաղկացած է ջրից, էթիլային սպիրտից, դրան ուղեկցող ցնդող խառնուկներից եւ խմորասնկերի նյութափոխանակության արգասիքներից.

արտադրող՝ իրավաբանական անձ (այդ թվում նաեւ՝ օտարերկրյա արտադրող), որն իր անունից իրականացնում է արտադրանքի արտադրություն կամ արտադրություն եւ իրացում եւ, որը պատասխանատու է դրա՝ Միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության համար.

ներմուծող՝ անդամ պետության ռեզիդենտ, որն անդամ պետության ոչ ռեզիդենտի հետ կնքել է ալկոհոլային արտադրանքի փոխանցման արտաքին առեւտրային պայմանագիր, իրականացնում է ալկոհոլային արտադրանքի իրացում եւ կրում է պատասխանատվություն դրա՝ Միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության համար.

խաղուն գինիների արտադրության դասական մեթոդ՝ սեղանի գինենյութի երկրորդային խմորման եւ շշերում կյուվեի հետտիրաժային հնեցման եղանակով խաղուն գինիների արտադրություն.

ալկոհոլային արտադրանքի հսկիչ նմուշ՝ շրջանառության մեջ դրվող արտադրանքի խմբաքանակից ընտրվող արտադրանքի նմուշ՝ կողմերի միջև՝ դրա իսկությանը եւ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների համապատասխանությանը վերաբերող վիճելի հարցերը լուծելու համար.

գարեջրային քաղցուի խտանյութ՝ գարեջրային քաղցուի կոնցենտրացման (ջրազերծման, խտացման) եղանակով պատրաստված արտադրանք.

գարեջրի (գարեջրային խմիչքների) հիմքով պատրաստվող խմիչքների համար նախատեսված քաղցուի խտանյութ՝ գարեջրի (գարեջրային խմիչքների) հիմքով պատրաստվող քաղցուի կոնցենտրացման (ջրազերծման, խտացման) եղանակով պատրաստված արտադրանք.

տարախառնուրդ (կուպաժ)՝ տարբեր բաղադրիչների խառնման եղանակով պատրաստվող՝ սահմանված կազմություն եւ հատկություններ ունեցող արտադրանք.

տարախառնում (կուպաժավորում)՝ նոր հատկություններ եւ բնութագրեր ստանալու նպատակով մեկ կամ տարբեր տեսակի ալկոհոլային արտադրանքի եւ (կամ) բաղադրիչների միախառնման տեխնոլոգիական եղանակ.

օժանդակ նյութեր՝ արտադրանքի կազմության մեջ չմտնող, սակայն տեխնոլոգիական նպատակով դրա արտադրության ժամանակ օգտագործվող նյութեր.

մացերացիա (կակդեցում)՝ լուծիչով լուծվող նյութերի լուծահանման նպատակով հեղուկ լուծիչներում (ջրում, յուղերում, էթիլային սպիրտում, ջրասպիրտային խառնուրդում) բուսական հյուսվածքների (սովորաբար բույսերի՝ ամբողջությամբ կամ մասամբ) թրմման տեխնոլոգիական եղանակ.

ածխաթթվային մացերացիա (կակդեցում)՝ խաղողի ամբողջական պտուղների, մրգերի՝ փակ սարքում ածխածնի դիօքսիդի մթնոլորտում մի քանի օրով տեղադրելու տեխնոլոգիական եղանակ.

քուսպ՝ հյուրի կորզման կամ մացերացիայի համար նախատեսված մանրացված խաղողի կամ մրգային զանգված.

ճակնդեղամաթ (մելաս)՝ շաքարային արտադրության կողմնակի արգասիք, սպեցիֆիկ հոտով մուգ գորշ գույնի շաքարահյութային հեղուկ, որը պարունակում է առնվազն 75 տոկոս չոր նյութ եւ առնվազն 46 տոկոս խմորվող շաքարների գումարի զանգվածային մաս.

ալկոհոլային արտադրանքի անվանում՝ բառ կամ բառերի խումբ՝ ներառյալ ալկոհոլային արտադրանքի կատեգորիան եւ (կամ) տեսակը, որոնք նախատեսված են ալկոհոլային արտադրանքը նշելու համար, որի ներքո այն դրվում է շրջանառության մեջ.

ալկոհոլային արտադրանքի ծագման վայրի պաշտպանված անվանում (ըստ ծագման պաշտպանված անվանում)՝ նշում, որը երկրի, քաղաքային կամ գյուղական բնակավայրի, տեղանքի կամ այլ աշխարհագրական օբյեկտի ժամանակակից կամ պատմական, պաշտոնական կամ ոչ պաշտոնական, լրիվ կամ կրճատ անվանումն է կամ պարունակում է այն, ինչպես նաեւ այդ անվանումից ածանցյալ նշում, որը հայտնի է դարձել դրա օգտագործման արդյունքում այն ալկոհոլային արտադրանքի մասով, որը բավարարում է հետեւյալ պահանջները՝

համապատասխան ալկոհոլային արտադրանքի բնութագրերը եւ որակը հիմնականում կամ բացառապես կապված են տվյալ աշխարհագրական օբյեկտի հետ՝ դրան բնորոշ բնական եւ (կամ) մարդկային գործոններով.

ալկոհոլային արտադրանքը պատրաստվում է բացառապես՝ տվյալ աշխարհագրական օբյեկտում ալկոհոլային արտադրանքի պատրաստման համար աճեցված եւ պատրաստման համար թույլատրված հումքից.

համապատասխան ալկոհոլային արտադրանքի պատրաստումը սահմանափակվում է տվյալ աշխարհագրական օբյեկտով:

Ալկոհոլային արտադրանքի ծագման վայրի անվանմանը տրամադրվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան իրավական պահպանություն, կամ այն պահպանվում է միջազգային պայմանագրերով.

Էթիլային սպիրտի բնական ծավալային մաս՝ մթերքում մինչ հարստացումը էթիլային սպիրտի ընդհանուր ծավալային մաս.

մանրէազերծում՝ ալկոհոլային արտադրանքի գոման տեխնոլոգիական եղանակ՝ դրա կենսաբանական կայունությունը բարձրացնելու նպատակով.

հարստացում՝ գինու մեջ էթիլային սպիրտի բնական ծավալային մասը 4-ից ոչ ավելի տոկոսով ավելացնելու տեխնոլոգիական եղանակ, որը կատարվում է մինչ խմորումը կամ խմորման ժամանակ խաղողի քաղցուի խաղողի կոնցենտրացված կրկնաթորված քաղցու ավելացնելու կամ հակադարձ օսմոսի կամ սառեցման (սառնախտացման) եղանակով քաղցուի կոնցենտրացման միջոցով, մրգային գինու մեջ՝ սախարոզի, սպիտակ շաքարի, շաքարավազի, շաքար-ռաֆինադի, մրգային քաղցուի կամ մրգային կոնցենտրացված քաղցուի ավելացման միջոցով.

գինիների նշագրումն ըստ շաքարի պարունակության՝ գինիների անվանման մաս, որով նշվում է գինեգործական արտադրանքում շաքարի պարունակությունը.

գինիների նշագրումն ըստ գույնի՝ գինիների անվանման մաս, որով նշվում է դրա գույնը.

Էթիլային սպիրտի ծավալային մաս, թնդություն՝ 20 °C ջերմաստիճանի պայմաններում արտադրանքում պարունակվող էթիլային սպիրտի ծավալի՝ արտադրանքի ընդհանուր ծավալի նկատմամբ հարաբերակցության ցուցանիշ՝ տոկոսներով արտահայտված.

Էթիլային սպիրտի ընդհանուր ծավալային մաս՝ էթիլային սպիրտի ծավալային մասի (թնդության) եւ էթիլային սպիրտի պոտենցիալ ծավալային մասի ցուցանիշների գումարը.

ալկոհոլային արտադրանքի խմբաքանակ՝ նույն անվանման, միանման փաթեթավորված, նույն արտադրողի կողմից ըստ նույն տարածաշրջանային (միջպետական) կամ ազգային ստանդարտի եւ (կամ) կազմակերպության ստանդարտի եւ (կամ) արտադրողի այլ փաստաթղթերի արտադրված, միաժամանակ ընդունման-հանձնման ներկայացված, ապրանքաուղեկից փաստաթղթերով ուղեկցվող, ալկոհոլային արտադրանքի հետագծելիությունն ապահովող՝ ալկոհոլային արտադրանքի կոնկրետ քանակ կամ ծավալ (մեկ տիրաժի, կուպաժի եւ ռեզերվուարի)։

պաստերացում՝ ալկոհոլային արտադրանքի ջերմամշակման տեխնոլոգիական եղանակ, որով ավելացվում է դրա պիտանիության ժամկետը։

ալկոհոլային արտադրանքի վերամշակում՝ տեխնոլոգիական գործողությունների ամբողջություն, որը թույլ է տալիս շտկել սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող ալկոհոլային արտադրանքը դրա՝ ուղղակի նշանակության հետագա օգտագործման համար։

գարեջրային քաղցու՝ գարեջրագործական հումքից կորզված ջրալուծելի լուծահանվող նյութերի ջրային լուծույթ։

գարեջրագործական հումք՝ գարեջրի եւ (կամ) գարեջրի (գարեջրային խմիչքների) հիմքով պատրաստվող խմիչքների պատրաստման համար օգտագործվող սննդամթերք, այդ թվում՝ գարեջրագործական ածիկ, հատուկ գարեջրագործական ածիկ, գարեջրային քաղցուի խտանյութ, ածիկային լուծամզուք, հացահատիկային մթերք, գայլուկ, գայլուկ պարունակող մթերք, շաքար պարունակող մթերք։

գարեջրագործական ածիկ՝ գարեջրագործական գարուց կամ ցորենից պատրաստված ածիկ։

գարեջրագործական գարի՝ գարեջրագործական ածիկի եւ ալկոհոլային արտադրանքի պատրաստման համար կիրառվող՝ կոնկրետ շրջանացված սորտերի գարի։

քաղցրացում՝ ալկոհոլային արտադրանքում սախարոզ, սպիտակ շաքար, դեղին շաքար, շաքար-ռաֆինադ, դեքստրոզ, գլյուկոզային շաքարահյութ, գլյուկոզաֆրուկտոզային շաքարահյութ, օսլային մաթ, մալթոզային (ածիկաշաքարային) կամ բարձրաշաքարային մաթ, հեղուկ շաքար, ինվերտային շաքար (սախարոզ), ինվերտային շաքարահյութ, ֆրուկտոզ, խաղողի կոնցենտրացված կրկնաթորված քաղցու, խաղողի կոնցենտրացված քաղցու, շաքարի կոլեր, մեղր, եղջերենու պտուղներից շաքարահյութ, համանման հատկություններ ունեցող ցանկացած բնական ածխաջուր ավելացնելու տեխնոլոգիական եղանակ: Քաղցրացումը գինեգործական արտադրանքի արտադրության ժամանակ իրականացվում է շաքարավազ, շաքար-ռաֆինադ, սպիտակ շաքար, սախարոզ, դեքստրոզ, ֆրուկտոզ, գլյուկոզ, խաղողի քաղցու, խաղողի կոնցենտրացված քաղցու, խաղողի կոնցենտրացված կրկնաթորված քաղցու, մրգային քաղցու կամ մրգային կոնցենտրացված քաղցու, կարամելացված շաքար, մեղր, գինու արտադրության ժամանակ՝ խաղողի կոնցենտրացված քաղցու, խաղողի կոնցենտրացված կրկնաթորված քաղցու, մրգային գինու արտադրության ժամանակ՝ շաքարավազ, շաքար-ռաֆինադ, սպիտակ շաքար, սախարոզ, դեքստրոզ, ֆրուկտոզ, գլյուկոզ, մրգային քաղցու կամ մրգային կոնցենտրացված քաղցու ավելացնելու եղանակով:

լիկյոր-օղու արտադրության կիսաֆաբրիկատ՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված՝ գործող տեխնիկական փաստաթղթերին (տեխնոլոգիական կանոնակարգերին, տեխնոլոգիական հրահանգերին) համապատասխան պատրաստվող սպիրտացված թուրմերի, սպիրտացված հյութերի, լուծամզուքների, սպիրտացված օշարակների, ինչպես նաև բուրավետ էթիլային սպիրտների, շաքարահյութի եւ շաքարի կոլերի տեսքով լիկյոր-օղու արտադրության արտադրանքի բաղկացուցիչ մաս:

կողմնակի ներառումներ՝ ալկոհոլային արտադրանքին ոչ բնորոշ՝ տարբեր բնույթի ներառումներ (բեկորներ, թղթի կտորներ, օքսիդաթաղանթ եւ դրսից ներառվող այլ օտար առարկաներ):

Էթիլային սպիրտի պոտենցիալ ծավալային մաս՝ 20 °C ջերմաստիճանում էթիլային սպիրտի ծավալների քանակ, որոնք կարող են ստացվել նշված ջերմաստիճանում խմորվող մթերքի 100 տոկոս ծավալներում պարունակվող շաքարների լրիվ խմորման արդյունքում.

ալկոհոլային արտադրանքի սպառողական հատկություններ՝ ալկոհոլային արտադրանքին բնորոշ զգայորոշման եւ ֆիզիկաքիմիական բնութագրեր, որոնցով տարբեր տեսակի եւ անվանումների ալկոհոլային արտադրանքը տարբերակվում է միմյանցից.

վաճառող՝ առքուվաճառքի պայմանագրով ալկոհոլային արտադրանք իրացնող կազմակերպություն (անկախ սեփականության ձեւից (տեսակից)) կամ առքուվաճառքի պայմանագրով սպառողներին ալկոհոլային արտադրանք իրացնող կազմակերպություն (անկախ սեփականության ձեւից (տեսակից)) կամ որպէս անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ.

խաղուն գինու արտադրության ռեգերվուարային մեթոդ՝ խաղուն գինու փրփրուն եւ խաղուն հատկությունների ձեւավորման եղանակ անդադար եւ պարբերական եղանակներով՝ տարողություններում (ակրատոֆորներում) դրա երկրորդային խմորման եւ հասունացման պրոցեսում.

խաղուն գինիների արտադրության ռեգերվուարային եղանակ՝ հերմետիկ ռեգերվուարներում խմորված գինու քաղցուի եւ (կամ) սեղանի գինեկութերի երկրորդային խմորման եղանակով խաղուն գինիների արտադրություն.

կրկնաթորում՝ միմյանց նկատմամբ շարժվող նյութերի հոսքերի բազմաստիճան գոլորշիացման եւ կոնդենսացման միջոցով՝ եռման տարբեր ջերմաստիճան ունեցող ցնդող նյութերի բաժանման տեխնոլոգիական եղանակ.

Էթիլային սպիրտահումքի կրկնաթորում՝ կրկնաթորման կամ բազմաթորման կայանքի օգնությամբ էթիլային սպիրտահումքից կրկնաթորված էթիլային սպիրտի ստացում.

շաքարի կուլեր՝ շաքարավազի ջերմամշակման արգասիք.

շաքար պարունակող մթերքներ՝ խմորման մեջ մասնակցող շաքարավազ, շաքար-ռաֆինադ, սպիտակ շաքար, շաքարահյութեր, սախարոզ, դեքստրոզ, ֆրուկտոզ, գլյուկոզ, օսլային մաթ, խաղողի կոնցենտրացված քաղցու, մրգային կոնցենտրացված քաղցու, մրգային կոնցենտրացված կրկնաթորված քաղցու, կարամելացված շաքար, մեղր, ինչպես նաև շաքար պարունակող զարեջրագործական հումք.

քաղցուի խմորում՝ քաղցուի շաքարները էթիլային սպիրտի, ածխածնի երկօքսիդի եւ խմորասնկերի կենսագործունեության արդյունքում առաջացող այլ նյութերի կերպափոխելու տեխնոլոգիական եղանակ.

ածիկ՝ արտադրանք հատիկից՝ այն թրջելու, աճեցնելու (սպիրտային արտադրության համար) եւ չորացնելու (զարեջրագործական արտադրության համար) միջոցով պատրաստված.

ածիկի լուծամզով՝ զարեջրագործական ածիկից եւ (կամ) հատուկ զարեջրագործական ածիկից լուծամզալի նյութերի լուծահանման (կորզման) եւ լուծամզալի նյութերի լուծույթի կոնցենտրացման եղանակով ստացված արտադրանք.

հատուկ զարեջրագործական ածիկ՝ զարեջրագործական զարուց կամ այլ հատիկից ստացվող ածիկ, որը պատրաստվում է հատիկի մշակման տեխնոլոգիական, այդ թվում նաև՝ ածիկաճեցման եղանակներով ածիկում կամ զարեջրագործական արտադրանքում սպեցիֆիկ հատկությունների եւ բնութագրերի առաջացման նպատակով.

սպիրտացում՝ կրկնաթորված էթիլային սպիրտի, գինու թորվածքի, մրգային թորվածքի, մեղրային թորվածքի, գինու կրկնաթորված թորվածքի, մրգային կրկնաթորված թորվածքի, խաղողի ծագման կրկնաթորված թորվածքի հավելման տեխնոլոգիական եղանակ.

քաղցու՝ էթիլային սպիրտի, գարեջրի, մեղրասպիրտի, խմորման թույլ ալկոհոլային խմիչքների արտադրության մեջ օգտագործվող հումքի լուծամզուքային նյութերի ջրային լուծույթ.

խաղողի քաղցու՝ 1 տոկոսից ոչ ավելի էթիլային սպիրտի ծավալային մասով կիսաֆաբրիկատ, որն ստացվում է թարմ խաղողից ինքնաբերաբար կամ մանրացման, չանչանջատման, հոսեցման, մամլման ֆիզիկական եղանակների կիրառմամբ.

գինու կոնցենտրացված քաղցու՝ 1 տոկոսից ոչ ավելի էթիլային սպիրտի զանգվածային մասով կիսաֆաբրիկատ, որն ստացվում է գինու քաղցուի ջրազերծման արդյունքում (բացառությամբ ուղղակի տաքացման մեթոդի)՝ 20 °C ջերմաստիճանում բեկումնաչափով որոշվող՝ չոր նյութերի առնվազն 50,9 տոկոս զանգվածային մասով.

խաղողի կոնցենտրացված կրկնաթորված քաղցու՝ 1 տոկոսից ոչ ավելի էթիլային սպիրտի ծավալային մասով կիսաֆաբրիկատ, որն ստացվում է գինու քաղցուի ջրազերծման արդյունքում՝ 20 °C ջերմաստիճանում բեկումնաչափով որոշվող՝ չոր նյութերի առնվազն 61,7 տոկոս զանգվածային մասով, եւ որը ենթարկվում է այն փաստաթղթում (փաստաթղթերում) (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ կամ այլ փաստաթուղթ) նշված՝ թթուների եւ այլ բաղադրիչների, բացառությամբ շաքարի ավելցուկի, հեռացման եղանակով մշակմանը, որին համապատասխան արտադրվել է ալկոհոլային արտադրանքը.

մեղրային քաղցու՝ 1 տոկոսից ոչ ավելի էթիլային սպիրտի ծավալային մասով մեղրի ջրային լուծույթ.

մրգային քաղցու՝ 1 տոկոսից ոչ ավելի էթիլային սպիրտի ծավալային մասով կիսապատրաստվածք, որն ստացվում է մրգերից ինքնաբերաբար կամ մանրացման, հոսեցման, մամլման ֆիզիկական եղանակների կիրառմամբ: Բնական խմորման էթիլային սպիրտի առնվազն 5 տոկոս ծավալային մասն ապահովելու համար թույլատրվում է շաքար ավելացնել.

մրգային կոնցենտրացված քաղցու՝ 1 տոկոսից ոչ ավելի էթիլային սպիրտի զանգվածային մասով կիսապատրաստվածք, որն ստացվում է մրգային քաղցուի ջրազերծման արդյունքում (բացառությամբ ուղղակի տաքացման մեթոդի)՝ 20 °C ջերմաստիճանում բեկումնաչափով որոշվող՝ չոր նյութերի առնվազն 50,9 տոկոս զանգվածային մասով.

ջերմամշակում՝ արտադրական փուլում ջերմությամբ եւ (կամ) սառնությամբ ալկոհոլային արտադրանքի մշակում.

տեխնոլոգիական ներառումներ՝ ալկոհոլային արտադրանքի հնեցման (պահպանման), գտման եւ (կամ) խցանափակման արդյունքում առաջացող ներառումներ (գտիչ նյութերի նրբաթելեր, կեղեւային փոշի, պոլիմերային փոշի).

տիրաժ՝ խաղուն գինիների, խաղողի խաղուն շամպայն գինիների եւ մարգարտային խաղուն գինիների՝ շշային եղանակով արտադրության տեխնոլոգիական գործընթաց, որը ներառում է տիրաժային խառնուրդի շշացումը, շշերի խցանափակումը եւ խցանի ամրացումը.

տիրաժային խառնուրդ՝ կիսաֆաբրիկատ, որը նախատեսված է շշային եղանակով խաղուն գինի, խաղողի խաղուն շամպայն գինի, մարգարտային խաղուն գինի պատրաստելիս երկրորդային խմորման համար եւ, որը պատրաստված է գտում անցած՝ տիրաժային (ռեզերվուարային) լիկյորի, խմորասնկերի մաքուր կուլտուրայի մերանի եւ սոսնձապարզող (վճիտացնող) նյութերի հավելմամբ գտում անցած՝ լցվածքով գինենյութի մշակված կուպաժներից.

տիրաժային (ռեզերվուարային) լիկյոր՝ կիսաֆաբրիկատ, որը նախատեսված է խաղուն գինի, խաղողի խաղուն շամպայն գինի, մարգարտային խաղուն գինի պատրաստելիս երկրորդային խմորման համար եւ, որը պատրաստված է շաքարի հավելմամբ գտում անցած՝ լցվածքով գինենյութի մշակված կուպաժներից: Թույլատրվում է տիրաժային (ռեզերվուարային) լիկյորի կիտրոնաթթվով թթվեցումը.

արտադրողի կողմից լիազորված անձ՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերջինիս տարածքում գրանցված իրավաբանական անձ, որը արտադրողի (այդ թվում՝ օտարերկրյա արտադրողի) հետ պայմանագրի հիման վրա այդ արտադրողի անունից գործողություններ է իրականացնում ալկոհոլային արտադրության համապատասխանությունը գնահատելիս եւ այն շրջանառության մեջ դնելիս, ինչպես նաեւ պատասխանատվություն է կրում ալկոհոլային արտադրանքի՝ Միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերին անհամապատասխանության համար.

Էքսպեդիցիոն լիկյոր՝ պատրաստի արտադրանքի ֆիզիկաքիմիական ցուցանիշներն ապահովելու համար՝ խաղուն գինիների եւ մարգարտային խաղուն գինիների արտադրության մեջ օգտագործվող կիսաֆաբրիկատ, որը պատրաստված է մշակված լցվածքով գինեկոթից կամ լցվածքով գինեկոթի կուպաժից՝ շաքարի եւ կիտրոնաթթվի հավելմամբ, բրենդիի համար գինու հնեցված թորվածքի հավելմամբ կամ առանց դրա հավելման.

լուծամզուք՝ բնական հումքի լուծամզուքային եւ (կամ) համաբուրավետիչ նյութ պարունակող եւ բուսական հումքի լուծամզման եղանակով ստացված մթերք:

III. Անդամ պետությունների տարածքներում

ալկոհոլային արտադրանքի շրջանառության կանոնները

6. Ալկոհոլային արտադրանքը շրջանառության մեջ դնելը եւ անդամ պետությունների տարածքներում դրա շրջանառությունը թույլատրվում են սույն տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաեւ Միության (Մաքսային միության) այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին դրա համապատասխանության դեպքում, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա:

7. Սույն տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաեւ Միության (Մաքսային միության) այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա, համապատասխանող ալկոհոլային

արտադրանքը, որն անցել է համապատասխանության գնահատման ընթացակարգը, պետք է ունենա Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մականշվածք:

Անդամ պետություններն իրենց տարածքներում ապահովում են շրջանառության թույլտվություն այն ալկոհոլային արտադրանքի համար, որը համապատասխանում է սույն տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաև Միության (Մաքսային միության) այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա, առանց ներկայացնելու լրացուցիչ պահանջներ սույն տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաև Միության (Մաքսային միության) այն տեխնիկական կանոնակարգերի պահանջների մասով, որոնց գործողությունը տարածվում է ալկոհոլային արտադրանքի վրա, եւ առանց անցկացնելու համապատասխանության գնահատման լրացուցիչ ընթացակարգեր:

8. Անդամ պետությունների տարածքներում շրջանառության մեջ գտնվող ալկոհոլային արտադրանքը պետք է ուղեկցվի տվյալ արտադրանքի հետագծելիությունն ապահովող ապրանքաուղեկից փաստաթղթերով:

9. Սույն տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Միության (Մաքսային միության) այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա, չհամապատասխանող ալկոհոլային արտադրանքը, այդ թվում՝ պիտանիության լրացած ժամկետով ալկոհոլային արտադրանքը, ենթակա է շրջանառությունից հանման այն տնտեսավարող սուբյեկտի կողմից, որն ալկոհոլային արտադրանքի սեփականատերն է (տիրապետողն է)՝ ինքնուրույն կամ անդամ պետության պետական հսկողության (վերահսկողության) լիազորված մարմինների ցուցումով:

IV. Ալկոհոլային արտադրանքի նույնականացում՝
սույն տեխնիկական կանոնակարգի տեխնիկական
կարգավորման օբյեկտներին այն դասելու նպատակով

10. Տեխնիկական կարգավորման այն օբյեկտներին ալկոհոլային արտադրանքը դասելու նպատակով, որոնց նկատմամբ կիրառվում է սույն տեխնիկական կանոնակարգը, ալկոհոլային արտադրանքի նույնականացումն իրականացվում է՝

ա) հայտատուի կողմից.

բ) Միության համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրում ընդգրկված սերտիֆիկացման հավատարմագրված մարմնի, փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) կողմից (այսուհետ համապատասխանաբար՝ սերտիֆիկացման մարմին, փորձարկման լաբորատորիա (կենտրոն)).

գ) անդամ պետության լիազորված մարմնի կողմից՝ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելիս.

դ) այլ շահագրգիռ անձանց կողմից:

11. Ալկոհոլային արտադրանքի նույնականացումն իրականացվում է Մաքսային միության «Մննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) 6-րդ հոդվածով նախատեսված կարգով:

V. Ալկոհոլային արտադրանքին
ներկայացվող անվտանգության պահանջները

12. Անդամ պետությունների տարածքներում պիտանիության սահմանված ժամկետի ընթացքում շրջանառության մեջ գտնվող ալկոհոլային արտադրանքն ըստ նշանակության օգտագործվելիս պետք է լինի անվտանգ:

13. Ալկոհոլային արտադրանքը պետք է համապատասխանի սույն տեխնիկական կանոնակարգի թիվ 2-4 հավելվածներով նախատեսված պահանջներին: Անդամ պետությունների տարածքներում շրջանառության մեջ գտնվող ալկոհոլային արտադրանքում չի թույլատրվում ինֆեկցիոն, մակաբուծային հիվանդությունների հարուցիչների, մարդու առողջության համար վտանգ ներկայացնող դրանց տոքսինների առկայությունը:

14. Ալկոհոլային արտադրանքի պիտանիության ժամկետը եւ պահպանման պայմանները սահմանվում են արտադրողի կողմից:

Եթե արտադրողի կողմից պիտանիության ժամկետ սահմանված չէ, ապա այդպիսի արտադրանքի պիտանիության ժամկետը սահմանափակված չէ:

15. Ալկոհոլային արտադրանքի հետ շփման մեջ գտնվող արտադրատեսակների արտադրության համար օգտագործվող նյութերը պետք է համապատասխանեն Միության համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ դրա բացակայության դեպքում՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

16. Ալկոհոլային արտադրանքում թույլատրվում է Մաքսային միության «Մննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 029/2012) սահմանված բնական բուրավետիչների (բնական համաբուրավետիչ նյութերի եւ պատրաստուկների) առկայությունը: Թույլատրվում է սույն տեխնիկական կանոնակարգի թիվ 4 հավելվածի 8-րդ աղյուսակով նախատեսված սննդային հավելումների օգտագործումը:

Տոնուսը բարձրացնող թույլ ալկոհոլային խմիչքներին ներկայացվող պահանջները սահմանված են Մաքսային միության «Մննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 021/2011):

17. Չի թույլատրվում՝

ա) ալկոհոլային արտադրանքում այնպիսի բաղադրիչների կիրառումը, որոնք նախատեսված չեն այն փաստաթղթով (փաստաթղթերով), որին համապատասխան արտադրված է ալկոհոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ (առկայության դեպքում) կամ այլ փաստաթուղթ)։

բ) ալկոհոլային արտադրանքում խաղողի սորտերի փոխարինումը կամ դրանց խառնումը այն դեպքերում, եթե դա նախատեսված չէ այն փաստաթղթով (փաստաթղթերով), որին համապատասխան արտադրված է ալկոհոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ (առկայության դեպքում) կամ այլ փաստաթուղթ)։

գ) ալկոհոլային արտադրանքի մեջ ոչ սննդային հումքից ստացված էթիլային սպիրտի ավելացումը։

VI. Ալկոհոլային արտադրանքի անվտանգության ապահովումը՝
արտադրության, պահպանման, տեղափոխման
(տրանսպորտային փոխադրման) եւ իրացման գործընթացում

18. Արտադրողները, վաճառողները (ներմուծողները) եւ արտադրողի կողմից լիազորված անձինք պարտավոր են ալկոհոլային արտադրանքի արտադրությունը, պահպանումը, փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) եւ իրացումն իրականացնել այնպես, որ այն համապատասխանի սույն տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաեւ Միության (Մաքսային միության) այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա։

19. Ալկոհոլային արտադրանքի անվտանգությունը դրա արտադրության ընթացքում ապահովվում է Մաքսային միության «Սննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջներին համապատասխան։

20. Ալկոհոլային արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող ջրի ապահովումն իրականացվում է սույն տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության «Սննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջներին համապատասխան:

Ալկոհոլային արտադրանքի արտադրության համար օգտագործվող ջուրը պետք է համապատասխանի սույն տեխնիկական կանոնակարգի թիվ 2 հավելվածով նախատեսված պահանջներին:

21. Ալկոհոլային արտադրանքի արտադրության ժամանակ օգտագործվող հումքը պետք է համապատասխանի Մաքսային միության «Սննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) եւ (կամ) Միության (Մաքսային միության)՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, իսկ դրանց բացակայության դեպքում՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջներին, եւ լինի հետագծելի:

Ալկոհոլային արտադրանքի արտադրության ժամանակ օգտագործվող բուրավետիչները, սննդային հավելումները, ֆերմենտային պատրաստուկները, տեխնոլոգիական օժանդակ միջոցները պետք է համապատասխանեն Մաքսային միության «Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 029/2012) պահանջներին:

22. Այն արտադրամասերը, որոնցում իրականացվում է ալկոհոլային արտադրանքի արտադրությունը, ալկոհոլային արտադրանքի արտադրության ընթացքում օգտագործվող տեխնոլոգիական սարքավորումները եւ գույքը, դրա արտադրության թափոնների պահպանման եւ հեռացման պայմանները պետք է համապատասխանեն Մաքսային միության «Սննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջներին:

23. Ալկոհոլային արտադրանքի պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ օգտահանման գործընթացները պետք է համապատասխանեն Մաքսային միության «Մանրամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջներին:

Ալկոհոլային արտադրանքի՝ հետագայում ըստ նշանակության օգտագործելու նպատակներով վերամշակման հնարավորության վերաբերյալ որոշումն ընդունվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

VII. Ալկոհոլային արտադրանքի փաթեթվածքին ներկայացվող պահանջները

24. Ալկոհոլային արտադրանքի համար օգտագործվում է այնպիսի փաթեթվածք, որը կապահովի դրա անվտանգությունը եւ ալկոհոլային արտադրանքի սպառողական հատկությունների պահպանումը պիտանիության ժամկետի ընթացքում վերջինիս շրջանառության ժամանակ, եւ կհամապատասխանի սույն տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության «Փաթեթվածքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 005/2011) պահանջներին:

25. Թույլատրվում է ալկոհոլային արտադրանքի լցնումն ապակե տարաներում (բացառությամբ գինիների, պաշտպանված աշխարհագրական նշումով գինիների, ապրանքի ծագման վայրի պաշտպանված անվանումով գինիների, խաղուն գինիների, մրգային սեղանի գինիների եւ մրգային խաղուն գինիների):

26. Խցանելու համար նախատեսված միջոցները պետք է ապահովեն սպառողական փաթեթվածքի հերմետիկությունը եւ ալկոհոլային արտադրանքի սպառողական հատկությունների պահպանվածությունը պիտանիության ժամկետի ընթացքում՝ պահպանման պայմանները պահպանելու դեպքում:

27. Սպառողական փաթեթվածքը վնասվելու դեպքում՝ ակոհոլային արտադրանքը ենթակա է շրջանառությունից հանման այն տնտեսավարող սուբյեկտի կողմից, որն ակոհոլային արտադրանքի սեփականատերն է (տիրապետողն է)՝ ինքնուրույն կամ անդամ պետության պետական հսկողության (վերահսկողության) լիազորված մարմինների ցուցումով:

VIII. Ալկոհոլային արտադրանքի մականշվածքին ներկայացվող պահանջները

28. Արտադրողը կամ վաճառողը (ներմուծողը) պարտավոր են սպառողին անհրաժեշտ եւ հավաստի տեղեկատվություն տրամադրել ակոհոլային արտադրանքի մասին:

29. Ալկոհոլային արտադրանքի մականշվածքը պետք է համապատասխանի սույն տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության «Մննդամթերքի մակնշման մասին» տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 022/2011) պահանջներին:

30. Ալկոհոլային արտադրանքի մականշվածքը զետեղվում է յուրաքանչյուր միավոր սպառողական փաթեթվածքի վրա՝ ընթերցելու համար հարմար (պիտակի, հակադարձ պիտակի, մանեկապիտակի, անվանապիտակի եւ այլնի վրա):

Ալկոհոլային արտադրանքի մականշվածքը զետեղվում է ռուսերենով եւ անդամ պետությունների օրենսդրության մեջ համապատասխան պահանջների առկայության դեպքում՝ այն անդամ պետության պետական լեզվով (պետական լեզուներով), որի տարածքում իրացվում է ակոհոլային արտադրանքը՝ բացառությամբ սույն տեխնիկական կանոնակարգով եւ Մաքսային միության «Մննդամթերքի մակնշման մասին» տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 022/2011) նախատեսված դեպքերի:

31. Ալկոհոլային արտադրանքի մականշվածքը պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝

ա) ալկոհոլային արտադրանքի անվանումը:

Ալկոհոլային արտադրանքի անվանումը կարող է լրացուցիչ նշվել լատինական այբուբենի տառերով (բացառությամբ «շամպայն», «կոնյակ» եւ «կալվադոս» բառերի): «Շամպայն», «կոնյակ» եւ «կալվադոս» բառերը կարող են լատինական այբուբենի տառերով նշվել միայն համապատասխան աշխարհագրական տարածաշրջանների ալկոհոլային արտադրանք արտադրողների կողմից.

բ) արտադրողի եւ անդամ պետության տարածքում գրանցված ու արտադրողի կողմից՝ ալկոհոլային արտադրանքի վերաբերյալ սպառողներից դժգոհություններ ընդունելու (առկայության դեպքում) լիազորություն ստացած կազմակերպության, ինչպես նաեւ ներմուծող կազմակերպության (երրորդ երկրներից անդամ պետությունների տարածքներ ներմուծվող ալկոհոլային արտադրանքի համար) անվանումները եւ գտնվելու վայրերը (իրավաբանական անձանց հասցեները) (նշելով պետությունը):

Անդամ պետությունների տարածքների սահմաններից դուրս տեղակայված՝ ալկոհոլային արտադրանքն արտադրողի գտնվելու վայրի մասին տեղեկատվությունը թույլատրվում է նշել լատինական այբուբենի տառերով եւ արաբական թվանշաններով կամ ալկոհոլային արտադրանքն արտադրողի գտնվելու վայրի պետության պետական լեզվով (այդ պետության անվանումը ռուսերենով նշելու դեպքում).

գ) էթիլային սպիրտի ծավալային մասը (թնդությունը) (ծավ. %):

Գարեջրագործական եւ գինեգործական արտադրանքի համար կարող է նշվել թնդության ստորին շեմը («ոչ պակաս»).

դ) արտադրանքի ծավալը՝ միավոր սպառողական փաթեթվածքում (լ, դմ³, սլ, մլ, սմ³).

ե) շաքարների զանգվածային կոնցենտրացիան (գ/դմ³, գ/լ, գ/100 սմ³):

Թույլատրվում է չնշել շաքարների զանգվածային կոնցենտրացիան դառը թուրմերի եւ բալզամների, գինեգործական արտադրանքի համար, որը դասակարգվել է ըստ շաքարների զանգվածային կոնցենտրացիայի (էքստրա բրյուտ, բրյուտ, չոր, կիսաչոր, կիսաքաղցր, քաղցր), 36 տոկոսից ավելի էթիլային սպիրտի ծավալային մասով գինեգործական արտադրանքի համար եւ այլ ալկոհոլային արտադրանքի համար, եթե բաղադրագրով շաքար նախատեսված չէ: Բալզամների համար նշվում է ընդհանուր լուծամզուքի զանգվածային կոնցենտրացիան: Գարեջրագործական արտադրանքի համար չի պահանջվում նշել շաքարների զանգվածային կոնցենտրացիան.

զ) բաղադրությունը (բաղադրիչների ցանկը՝ դրանց զանգվածային մասերի նվազման կարգով՝ բացառությամբ գինիների, լիկյորային գինիների, խաղուն գինիների, մարգարտային խաղուն գինիների, գազավորված գինիների, մրգային գինիների, կոնյակների, բրենդիների, այդ թվում՝ մրգային բրենդիների, վիսկիի, ռոմի եւ մեկ տեսակի հումքից պատրաստված ալկոհոլային արտադրանքի): Տեսակավոր գինիների համար նշվում է այն խաղողի տեսակը, որից դրանք պատրաստվել են: Օղիների եւ հատուկ օղիների համար առաջինը նշվում է օգտագործվող կրկնաթորված էթիլային սպիրտի տեսակը եւ լրացուցիչ՝ օղիների բույրի եւ համի վրա ազդող բաղադրիչների ցանկը.

է) մրգային գինիների, գինու մրգային խմիչքների, մրգային սիդրերի եւ մրգային օղիների, մրգային բրենդիների համար՝ այն մրգերի տեսակները, որոնցից դրանք պատրաստված են.

ը) հնեցված գինիների եւ կոլեկցիոն գինիների համար՝ բերքահավաքի տարեթիվը, կոլեկցիոն խաղուն գինիների եւ բարձրորակ խաղուն գինիների համար՝ թողարկման ամսաթիվն ու տարեթիվը.

թ) բարձրորակ խաղուն գինիների (խաղողի խաղուն շամպայն գինիների) համար՝ արտադրության մեթոդը (դասական կամ ռեզերվուարային).

ժ) կոնյակի, բրենդիի, բարձրորակ բրենդիի, կալվադոսի, մրգային բրենդիների, վիսկիի, ռոմի համար՝ թորվածքների հնեցման ժամկետը.

ժա) գարեջրի եւ գարեջրի հիմքով պատրաստված խմիչքների (գարեջրային խմիչքների) համար՝ մշակման տիպը, եղանակը, չգտման մասին տեղեկություններ, լուծամզելիությունը (տոկոսներով) (գարեջրի համար), իրական լուծամզուքը (տոկոսներով) (գարեջրային խմիչքների համար)։

ժբ) արտադրության (շշալցման, պատրաստման, ձեւակերպման) ամսաթիվը եւ պիտանիության ժամկետը։

Այն ալկոհոլային արտադրանքի մականշվածքը, որի նկատմամբ արտադրողը սահմանում է անսահմանափակ պիտանիության ժամկետ, պետք է լրացվի հետևյալ գրառմամբ՝

«Պիտանիության ժամկետը սահմանափակված չէ՝ պահպանման պայմաններին հետևելու դեպքում:»։

ժգ) պահպանման պայմանները։

Թույլատրվում է բացելուց հետո չնշել պահպանման պայմանները, եթե արտադրանքի որակն ու անվտանգությունը չեն փոխվում ալկոհոլային արտադրանքը փչանալուց պաշտպանող փաթեթվածքը բացելուց հետո։

ժդ) ցայտուն նախազգուշացնող գրառում, որը զետեղվում է մեծատառերով, ամենախոշոր չափի դյուրընթեռնելի տառատեսակով եւ զբաղեցնում է հակադարձ պիտակի, կամ պիտակի, կամ սպառողական տարայի մակերեսի առնվազն 10 տոկոսը։

«Ալկոհոլի չափից ավելի օգտագործումը վնասակար է Ձեր առողջության համար:»։

ժե) արտադրության ընթացքում օգտագործված սննդային հավելումների անվանումները (բացառությամբ արտադրական գործընթացի համար ֆունկցիոնալ առումով անհրաժեշտ սննդային հավելումների, որոնք չեն ներառվում պատրաստի ալկոհոլային արտադրանքի կազմում), տեղեկատվություն գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված օրգանիզմների օգտագործմամբ ստացված բաղադրիչների առկայության մասին։

ժգ) տեղեկատվություն արտադրանքի համապատասխանության գնահատման վերաբերյալ (Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշան).

ժե) թույլ ալկոհոլային խմիչքների համար՝ տեղեկատվություն սպառողական փաթեթվածքի ծավալում էթիլային սպիրտի պարունակության վերաբերյալ.

ժը) սպառողական տարայի (փաթեթվածքի) համար՝ գրառում՝

«Խորհուրդ չի տրվում օգտագործել մինչև 18 տարեկան անձանց, հղի եւ կերակրող կանանց, ինչպես նաեւ՝ նյարդային համակարգի եւ ներքին օրգանների հիվանդություններով տառապող անձանց:».

Ղազախստանի Հանրապետության տարածքում իրացվող արտադրանքի համար կատարվում է գրառում՝

«Ալկոհոլը հակացուցված է 21 տարին չլրացած անձանց, հղի եւ կերակրող կանանց, կենտրոնական նյարդային համակարգի, երիկամների, լյարդի եւ մարսողության օրգանների հիվանդություններով տառապող անձանց:».

«Թույլ ալկոհոլային» հասկացությունը եւ դրա տարբերակներն արգելվում են օգտագործել 7 տոկոս եւ ավելի էթիլային սպիրտի ծավալային մասով ալկոհոլային խմիչքների համար:

32. Տեղեկատվությունը զետեղվում է դրա հստակ ընթեռնելիությունն ապահովող ցանկացած ձևով: Ընդ որում, գրությունները, նշանները, խորհրդանիշները պետք է կոնտրաստային լինեն այն ֆոնի նկատմամբ, որի վրա զետեղված է մականշվածքը:

33. Ալկոհոլային արտադրանքի մականշվածքը կարող է պարունակել նաեւ լրացուցիչ տեղեկատվություն ալկոհոլային արտադրանքի եւ դրա արտադրողի վերաբերյալ, այդ թվում՝ պատկերագրերի, նկարների, նշանների, խորհրդանիշների, այլ նշագրումների եւ (կամ) դրանց համակցության տեսքով:

34. Սպառողի համար նախատեսված տեղեկատվությունը չի զետեղվում խմբային փաթեթվածքների թափանցիկ պաշտպանիչ պոլիմերային նյութերի վրա, որոնք օգտագործվում են փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար եւ որոնց մեջ փաթեթված է ալկոհոլային արտադրանքը:

35. Լցվածքով ալկոհոլային արտադրանքի մակնշման ժամանակ ապրանքաուղեկից փաստաթղթերում տեղեկատվությունը պարունակում է՝

ա) արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի) անվանումը եւ գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն).

բ) ալկոհոլային արտադրանքի անվանումը.

գ) տեղեկություններ արտադրանքի ծավալի վերաբերյալ.

դ) խմբաքանակի համարը.

ե) սույն տեխնիկական կանոնակարգի 31-րդ կետի «գ»-«ժգ», «ժե» եւ «ժզ» ենթակետերում նշված տեղեկատվությունը:

36. Սպառողական տարայի մեջ չփաթեթավորված (լցվածքով) գինին, լիկյորային գինին, մրգային գինին, թույլատրվում է նշել որպես «գինենյութ»:

37. Արտասահմանյան արտադրողների ալկոհոլային արտադրանքի համար սույն տեխնիկական կանոնակարգի 31-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը կարող է կրկնվել հակադարձ պիտակի եւ (կամ) մանեկապիտակի վրա՝ համապատասխան երրորդ պետության պետական լեզվով:

38. Սույն տեխնիկական կանոնակարգի 31-րդ կետի «ա», «ժբ»-«ժդ» ենթակետերով նախատեսված տեղեկությունները զետեղվում են սպառողական փաթեթվածքի, եւ (կամ) պիտակի, եւ (կամ) հակադարձ պիտակի, եւ (կամ) մանեկապիտակի վրա, որոնց հեռացումը սպառողական փաթեթվածքի վրայից դժվարացված է:

Սույն տեխնիկական կանոնակարգի 31-րդ կետի «բ», «դ» «զ» եւ «ժ» ենթակետերով նախատեսված տեղեկությունները զետեղվում են սպառողական փաթեթվածքի, եւ (կամ) պիտակի (հակադարձ պիտակի, մանեկապիտակի), եւ (կամ) յուրաքանչյուր փաթեթավորման միավորում տեղադրվող կամ յուրաքանչյուր փաթեթավորման միավորին կցվող ներդիր-թերթիկի վրա:

39. Ալկոհոլային արտադրանքի մակնշման ժամանակ օգտագործվում են տեղեկատվության զետեղման այնպիսի միջոցներ ու եղանակներ, որոնք ապահովում են ալկոհոլային արտադրանքի փոխադրման (տրանսպորտային փոխադրման), պահպանման եւ իրացման ժամանակ դրա պահպանվածությունը:

IX. Ալկոհոլային արտադրանքի՝ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության ապահովումը

40. Սույն տեխնիկական կանոնակարգին ալկոհոլային արտադրանքի համապատասխանությունն ապահովվում է կամ անմիջականորեն դրա պահանջների կատարման եղանակով, կամ միջազգային եւ տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկում ներառված ստանդարտների պահանջների կատարման ճանապարհով, որոնք կամավոր հիմունքով կիրառելու արդյունքում ապահովվում է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների եւ Միության (Մաքսային միության) այն տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանումը, որոնց գործողությունը տարածվում է ալկոհոլային արտադրանքի վրա:

41. Ալկոհոլային արտադրանքի հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների մեթոդները սահմանվում են այն ստանդարտներով, որոնք ներառված են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ նմուշառման կանոնները պարունակող ստանդարտների ցանկում, որոնք անհրաժեշտ են սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման ու կատարման եւ ալկոհոլային արտադրանքի համապատասխանության գնահատման համար:

X. Համապատասխանության գնահատումը

42. Ալկոհոլային արտադրանքի՝ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացվում է հետևյալ ձևերով՝

ա) համապատասխանության հաստատումը (համապատասխանության հայտարարագրումը) (բացառությամբ նոր տեսակի ալկոհոլային արտադրանքի)։

բ) նոր տեսակի ալկոհոլային արտադրանքի պետական գրանցումը Մաքսային միության «Մննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) դրույթներին համապատասխան։

43. Սույն տեխնիկական կանոնակարգի եւ Միության (Մաքսային միության) այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է ալկոհոլային արտադրանքի արտադրության, պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ օգտահանման գործընթացների վրա, ալկոհոլային արտադրանքի արտադրության, պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ օգտահանման գործընթացների համապատասխանության գնահատումն անցկացվում է սույն տեխնիկական կանոնակարգով եւ Միության տեխնիկական այլ կանոնակարգերով (Մաքսային միության) սահմանված պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն (հսկողություն) իրականացնելու ձևով, որոնց գործողությունը տարածվում է նշված գործընթացների վրա։

44. Ալկոհոլային արտադրանքի համապատասխանության գնահատման ժամանակ դիմումատու կարող է լինել անդամ պետության տարածքում՝ դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձը, որն արտադրող կամ վաճառող (ներմուծող) է կամ արտադրողի կողմից լիազորված անձ է։

45. Ալկոհոլային արտադրանքի համապատասխանության հայտարարագրումն իրականացվում է հետևյալ սխեմաներից մեկով՝

սերիական թողարկման ակտիվային արտադրանքի համար՝ 3դ կամ 6դ սխեման.

ակտիվային արտադրանքի խմբաքանակի համար՝ 4դ սխեման:

Ակտիվային արտադրանքի համապատասխանության հայտարարագրման սխեմայի ընտրությունը կատարվում է դիմումատուի կողմից:

46. Ակտիվային արտադրանքի համապատասխանությունը հայտարարագրելիս դիմումատու կարող է լինել՝

ա) 3դ եւ 6դ սխեմաներով հայտարարագրման դեպքում՝ արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը).

բ) 4դ սխեմայով հայտարարագրման դեպքում՝ արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը), վաճառողը (ներմուծողը):

47. Ակտիվային արտադրանքի համապատասխանության հայտարարագրումը 3դ, 4դ եւ 6դ սխեմաներով դիմումատուի կողմից իրականացվում է սեփական ապացույցների (առկայության դեպքում) եւ սերտիֆիկացման մարմնի եւ (կամ) փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) մասնակցությամբ ստացված ապացույցների հիման վրա:

48. Ակտիվային արտադրանքի համապատասխանությունը հայտարարագրելիս դիմումատուն՝

ա) ձեւավորում եւ վերլուծում է համապատասխանության մասին հայտարարագրի ընդունման համար հիմք ծառայած փաստաթղթերի եւ տեղեկությունների լրակազմը, որը ներառում է՝

անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ իրավաբանական անձի կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցվող ֆիզիկական անձի պետական գրանցման ժամանակ տրվող դիմումատուի գրանցման կամ հաշվառման (անհատական, նույնականացման) համարի մասին տեղեկությունները.

որակի եւ անվտանգության կառավարման համակարգի սերտիֆիկատը (սերտիֆիկատի պատճենը) (6դ սխեմայի համար).

արտադրանքի խմբաքանակը նույնականացնող կոնտրակտի (մատակարարման պայմանագրի) պատճենը եւ ապրանքաուղեկից փաստաթղթերը (4դ սխեմայի համար).

արտադրողի (այդ թվում՝ օտարերկրյա արտադրողի) հետ կնքված այն պայմանագիրը, որով նախատեսվում է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ինչպես նաեւ Միության (Մաքսային միության) այնպիսի այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը այս արտադրանքի վրա տարածվում է՝ Միության մաքսային տարածք մատակարարվող ավտոմոբիլային արտադրանքի համապատասխանության ապահովումը, եւ նշված պահանջներին այդ արտադրանքի անհամապատասխանության համար պատասխանատվությունը (արտադրողի կողմից լիազորված անձի համար).

դիմումատուի ընտրությամբ այլ փաստաթղթեր, որոնք հիմք են հանդիսացել համապատասխանության մասին հայտարարագիրն ընդունելու համար:

Օտար լեզվով կազմված նշված փաստաթղթերն ուղեկցվում են ռուսերեն թարգմանությամբ եւ (կամ) անդամ պետության օրենսդրության մեջ համապատասխան պահանջի առկայության դեպքում՝ այն անդամ պետության պետական լեզվով թարգմանությամբ, որտեղ իրականացվում է համապատասխանության մասին հայտարարագրի գրանցումը.

բ) դիմում է սերտիֆիկացման մարմին կամ փորձարկման լաբորատորիա (կենտրոն) սույն տեխնիկական կանոնակարգի IV-րդ բաժնին համապատասխան ավտոմոբիլային արտադրանքի նույնականացումն անցկացնելու, ավտոմոբիլային արտադրանքի նմուշառման, ինչպես նաեւ (սերտիֆիկացման մարմին դիմելիս) փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների անցկացումը կազմակերպելու համար:

գ) ապահովում է արտադրական հսկողության իրականացումը եւ ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրության գործընթացով ապահովվի ակոհոլային արտադրանքի համապատասխանությունը սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին (3դ եւ 6դ սխեմաների համար)։

դ) ապահովում է ակոհոլային արտադրանքի նույնականացման, ակոհոլային արտադրանքի նմուշառման, ակոհոլային արտադրանքի նմուշի (նմուշների) հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների անցկացումը սույն տեխնիկական կանոնակարգի եւ Միության (Մաքսային միության) այնպիսի այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը հավաստելու համար, որոնց գործողությունը դրա վրա տարածվում է։

ե) ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ որակի եւ անվտանգության ներդրված եւ սերտիֆիկացված կառավարման համակարգի գործունեության կայունությունը, ինչպես նաեւ սույն տեխնիկական կանոնակարգի եւ Միության (Մաքսային միության) այնպիսի այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանող ակոհոլային արտադրանքի պատրաստման համար արտադրության պայմաններն ապահովելու համար, որոնց գործողությունը դրա վրա տարածվում է (6դ սխեմայի համար)։

զ) ընդունում է սույն տեխնիկական կանոնակարգի եւ Միության (Մաքսային միության) այնպիսի այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին ակոհոլային արտադրանքի համապատասխանության մասին հայտարարագիրը, որոնց գործողությունը դրա վրա տարածվում է, որը ձեւակերպվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 293 որոշմամբ հաստատված՝ միասնական ձեւի եւ կանոնների համաձայն (այսուհետ՝ համապատասխանության մասին հայտարարագիր), եւ գրանցում է համապատասխանության մասին հայտարարագիրը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի մարտի 20-ի թիվ 41 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին

արտադրանքի համապատասխանության մասին հայտարարագիրը գրանցելու, դրա գործողությունը կասեցնելու, վերականգնելու եւ դադարեցնելու կարգին համապատասխան.

է) ապահովում է Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի մակնշման զետեղումը ալկոհոլային արտադրանքի վրա.

ը) համապատասխանության հաստատման ընթացակարգերի ավարտից հետո ձեւավորում եւ պահպանում է այն ապացուցողական նյութերի լրակազմը, որոնք հիմք են հանդիսացել համապատասխանության մասին հայտարարագրի ընդունման համար եւ որոնք հաստատում են սույն տեխնիկական կանոնակարգի եւ Միության (Մաքսային միության) այնպիսի այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին ալկոհոլային արտադրանքի համապատասխանությունը, որոնց գործողությունը դրա վրա տարածվում է, որն իր մեջ ներառում է՝

սույն կետի «ա» ենթակետով նախատեսված փաստաթղթերը.

սերտիֆիկացման մարմնի կամ փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) կողմից անցկացված՝ ալկոհոլային արտադրանքի նմուշառման ակտը.

փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) անցկացված հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների մասին արձանագրությունը (արձանագրությունները).

համապատասխանության մասին գրանցված հայտարարագիրը:

49. Սերտիֆիկացման մարմինը կամ փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) դիմումատուի կողմից դիմում ներկայացնելու դեպքում՝

ա) սույն տեխնիկական կանոնակարգի IV բաժնին համապատասխան՝ անցկացնում է ալկոհոլային արտադրանքի նույնականացումը եւ ալկոհոլային արտադրանքի նմուշառումը, ինչպես նաեւ նույնականացման եւ նմուշառման արդյունքներն արտացոլում է ալկոհոլային արտադրանքի նմուշառման ակտում, որի մեջ, այդ թվում՝ նշվում են ալկոհոլային արտադրանքի նմուշառման տեղը եւ ամսաթիվը, ալկոհոլային արտադրանքի պահպանման պայմանները եւ դրա նույնականացման արդյունքները.

բ) կազմում է ալկոհոլային արտադրանքի հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների ծրագիր (ալկոհոլային արտադրանքի այն ցուցանիշների (բնութագրերի) նշումով, որոնք հաստատում են սույն տեխնիկական կանոնակարգի եւ Միության (Մաքսային միության) այնպիսի այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը, որոնց գործողությունը դրա վրա տարածվում է)՝ հետազոտություններ (փորձարկումներ) իրականացնելու նպատակով.

գ) ալկոհոլային արտադրանքի հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների ծրագիրն ու ալկոհոլային արտադրանքի վերցված նմուշը (նմուշները) ուղարկում է փորձարկման լաբորատորիա (կենտրոն)՝ հետազոտություններ (փորձարկումներ) եւ չափումներ անցկացնելու համար (այն դեպքում, եթե դիմումատուն դիմում է սերտիֆիկացման մարմին):

50. Փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) իրականացնում է ալկոհոլային արտադրանքի հետազոտություններ (փորձարկումներ) եւ չափումներ, ձեւակերպում է հետազոտությունների (փորձարկումների) ու չափումների արձանագրությունը եւ ուղարկում է այն դիմումատուին:

51. Համապատասխանության մասին հայտարարագրի գրանցման համար դիմումատուն ներկայացնում է Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության մասին հայտարարագիրը գրանցելու, դրա գործողությունը կասեցնելու, վերականգնելու եւ դադարեցնելու կարգի 4-րդ եւ 5-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաեւ սերտիֆիկացման մարմնի կամ փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) կողմից անցկացված՝ ալկոհոլային արտադրանքի նմուշառման ակտը, ինչպես նաեւ փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) անցկացված հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների մասին արձանագրությունը (արձանագրությունները):

52. Սերիական թողարկման ակտիվային արտադրանքի համապատասխանության մասին հայտարարագրի գործողության ժամկետը կազմում է՝

3դ սխեմայով՝ 2 տարուց ոչ ավելի,

6դ սխեմայով՝ 3 տարուց ոչ ավելի:

Ակտիվային արտադրանքի խմբաքանակի համար համապատասխանության մասին հայտարարագրի գործողության ժամկետը սահմանվում է դիմումատուի կողմից, սակայն այն չի կարող գերազանցել ակտիվային արտադրանքի պիտանիության ժամկետը:

Թույլատրվում է ակտիվային արտադրանքի խմբաքանակի համար համապատասխանության մասին հայտարարագրի գործողության ժամկետ չսահմանել այն դեպքում, եթե ակտիվային արտադրանքի պիտանիության ժամկետը սահմանափակված չէ արտադրողի կողմից:

53. Սույն տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման օբյեկտ հանդիսացող սերիական թողարկման ակտիվային արտադրանքի գրանցված համապատասխանության մասին հայտարարագիրը տարածվում է տվյալ արտադրանքի վրա, որն արտադրված է հետազոտություններ (փորձարկումներ) եւ չափումներ անցած՝ ակտիվային արտադրանքի վերցված նմուշների արտադրման ամսաթվից հետո: Այդ դեպքում նշված տեղեկատվությունն ու հետազոտություններ (փորձարկումներ) եւ չափումներ անցած՝ ակտիվային արտադրանքի վերցված նմուշների արտադրման ամսաթվի մասին տեղեկությունները կարող են նշվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 293 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության մասին հայտարարագրի միասնական ձևի 8-րդ տողում:

54. Սույն տեխնիկական կանոնակարգի 48-րդ կետի «ը» ենթակետում նշված՝ ապացուցողական նյութերի լրակազմը պահվում է դիմումատուի մոտ՝

ա) սերիական թողարկման ակտիվային արտադրանքի համապատասխանության հաստատման դեպքում՝ համապատասխանության մասին հայտարարագրի գործողությունը դադարելու օրվանից ոչ պակաս, քան 10 տարվա ընթացքում.

բ) ակտիվային արտադրանքի խմբաքանակի համապատասխանության հաստատման դեպքում՝ խմբաքանակի վերջին արտադրատեսակի իրացման օրվանից ոչ պակաս, քան 5 տարվա ընթացքում, իսկ եթե համապատասխանության մասին հայտարարագրի գործողության ժամկետը սահմանափակված չէ՝ դրա գրանցման ամսաթվից ոչ պակաս, քան 10 տարվա ընթացքում:

55. Սույն տեխնիկական կանոնակարգի 48-րդ կետի «ը» ենթակետում նշված ապացուցողական փաստաթղթերի լրակազմը տրամադրվում է անդամ-պետությունների պետական հսկողության (վերահսկողության) լիազորված մարմիններին՝ նրանց պահանջով:

56. Դիմումատուի որոշմամբ՝ համապատասխանության հայտարարագրման փոխարեն ակտիվային արտադրանքի նկատմամբ կարող է իրականացվել սերտիֆիկացում 1g, 2g սխեմաներով (սերիական թողարկման ակտիվային արտադրանքի համար) եւ 3g սխեմայով (ակտիվային արտադրանքի խմբաքանակի համար)՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2018 թվականի ապրիլի 18-ի թիվ 44 որոշմամբ հաստատված՝ համապատասխանության գնահատման տիպային սխեմաների համաձայն:

XI. Միության շուկայում ակտիվային

արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշում

57. Ակտիվային արտադրանքը, որը համապատասխանում է սույն տեխնիկական կանոնակարգի եւ Միության (Մաքսային միության) այնպիսի այլ

տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը դրա վրա տարածվում է, եւ որը, սույն տեխնիկական կանոնակարգի դրույթներին համապատասխան, անցել է համապատասխանության գնահատման ընթացակարգ, մակնշվում է Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով:

58. Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումն իրականացվում է մինչեւ ակոհոլային արտադրանքը շրջանառության մեջ դնելը:

59. Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է ակոհոլային արտադրանքի սպառողական փաթեթվածքի վրա՝ ակոհոլային արտադրանքի պիտանիության ժամկետի ընթացքում դրա հստակ եւ պարզ պատկերումն ապահովող ցանկացած եղանակով, ինչպես նաեւ ներկայացվում է ապրանքաուղեկից փաստաթղթերում: Լցվածքով ակոհոլային արտադրանքի համար թույլատրվում է Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի ներկայացումը ապրանքաուղեկից փաստաթղթերում:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Եվրասիական տնտեսական միության

«Ալկոհոլային արտադրանքի

անվտանգության մասին»

տեխնիկական կանոնակարգի

(ԵԱՏՄ ՏԿ 047/2018)

ՑԱՆԿ

**Էթիլային սպիրտ պարունակող այն արտադրանքի,
որի վրա չեն տարածվում Եվրասիական տնտեսական միության
«Ալկոհոլային արտադրանքի անվտանգության մասին»
տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 0/20) պահանջները**

1. Հրուշակեղեն՝ շաքարային:
2. Հրուշակեղեն՝ ալրային:
3. Խմիչքներ՝ ոչ ալկոհոլային/խմորման:
4. Կվասներ:
5. Մթերքներ՝ կաթնաթթվային:
6. Երշիկներ՝ հում ապխտած եւ հում թորշոմած:
7. Գարեջուր եւ գարեջրային խմիչքներ՝ էթիլային սպիրտի 0,5 տոկոսից ոչ ավելի ծավալային մասով:
8. Խաղողի քաղցու, խաղողի կոնցենտրացված քաղցու, մրգային կոնցենտրացված քաղցու, խաղողի կոնցենտրացված կրկնաթորված քաղցու, մեղրային քաղցու, մրգային քաղցու:

9. Բնական բուրաստեղծ եւ մրգային կամ բանջարեղենային նյութեր, այդ թվում՝ կոնցենտրացված, որոնք ստացվել են՝ չօգտագործելով սննդային էթիլ սպիրտը որպես լուծիչ:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2

Եվրասիական տնտեսական միության

«Ալկոհոլային արտադրանքի

անվտանգության մասին»

տեխնիկական կանոնակարգի

(ԵԱՏՄ ՏԿ 047/2018)

**Էթիլային սպիրտին, սպիրտային խմիչքներին, թույլ ալկոհոլային խմիչքներին
եւ սպիրտ պարունակող սննդամթերքին ներկայացվող պահանջները**

Աղյուսակ 1

Սպիրտային խմիչքներին ներկայացվող անվտանգության հիգիենիկ պահանջները

Մթերքի խումբը	Ցուցանիշները	Չափման միավորները	Թույլատրելի մակարդակները, ոչ ավելի
1	2	3	4
1. Օղի, պաշտպանված ծագման վայրի անվանումով օղի, հատուկ օղի	մեթիլային սպիրտ	% (ծավալային մասը՝ անջուր սպիրտի վերահաշվարկով)	0,02
2. Սպիրտային խմիչքներ եւ թույլ ալկոհոլային խմիչքներ	մեթիլային սպիրտ	% (ծավալային մասը՝ անջուր սպիրտի վերահաշվարկով)	0,05

Մթերքի խումբը	Ցուցանիշները	Չափման միավորները	Թույլատրելի մակարդակները, ոչ ավելի
1	2	3	4
այդ թվում՝ կորիզավոր մրգերի բաղադրամասեր պարունակող սպիրտային խմիչքներ	կապտաթթու	մգ/դմ ³	35
3. Սպիրտային խմիչքներ՝ խինին պարունակող	խինին	մգ/կգ	300
4. Սպիրտացված հյութեր, սպիրտացված օշարակներ	երկաթի զանգվածային կոնցենտրացիան	մգ/դմ ³	15
	պղնձի զանգվածային կոնցենտրացիան	մգ/դմ ³	5
	ցնդող թթուների զանգվածային կոնցենտրացիան՝ քացախաթթվի վերահաշվարկով	մգ/դմ ³	0,3
5. Սպիրտացված հյութեր, սպիրտացված թուրմեր, սպիրտացված օշարակներ, բուրավետ սպիրտներ	մեթիլային սպիրտ	% (ծավալային մասը՝ անջուր սպիրտի վերահաշվարկով)	0,05

Էթիլային սպիրտի արտադրության համար օգտագործվող սննդային հումքի ցանկը*

Անվանումը

1. Հացահատիկային եւ ոչ հացահատիկային մշակաբույսերի պտուղներ (սերմեր) եւ լոբահատիկավոր մշակաբույսերի սերմեր (այսուհետ՝ հատիկ)
2. Կարտոֆիլ
3. Շաքարի ճակնդեղ, տոպինամբուր (գետնախնձոր), շաքարահումք, ճակնդեղամաթ, տապիոկ (մանիոկ) եւ շաքար պարունակող ու օսլա պարունակող այլ պարենային հումք (բացառությամբ մրգայինի (պտղա-հատապտղայինի))
4. Հատիկի, կարտոֆիլի, շաքարի ճակնդեղի եւ ճակնդեղամաթի, շաքարահումքի եւ շաքար պարունակող ու օսլա պարունակող այլ պարենային հումքի հումքային համակցություններ (խառնուրդներ) (բացառությամբ մրգայինի (պտղա-հատապտղայինի))
5. Հացահատիկի վերամշակումից ստացված մթերքներ. ալյուր, ձավար, թեփ
6
6. Շաքար պարունակող եւ օսլա պարունակող այլ սննդամթերք եւ պարենային հումք (բացառությամբ մրգայինի (պտղա-հատապտղայինի))
7
7. Վերամշակման արդյունքներ, որոնք ստացվում են սույն աղյուսակի 1-6 կետերում նշված էթիլային սպիրտի արտադրության ժամանակ, օղիների, լիկյոր-օղու արտադրատեսակների արտադրության ժամանակ*
8
8. Սպիրտահումք, սույն աղյուսակի 1-6 կետերում նշված էթիլային սպիրտի գլխավոր ֆրակցիա*

* Օղիներ, պաշտպանված ծագման վայրի անվանումով օղիներ, հատուկ օղիներ եւ լիկյոր-օղու արտադրատեսակներ արտադրելիս չի թույլատրվում օգտագործել էթիլային սպիրտի գլխավոր ֆրակցիայից կրկնաթորված էթիլային սպիրտ եւ լիկյոր-օղու արտադրության թափոններ:

Կրկնաթորված էթիլային սպիրտի նույնականացման ցուցանիշները

Ցուցանիշները	Ցուցանիշի արժեքը
1. Զգայորոշման ցուցանիշները	թափանցիկ անգույն հեղուկ՝ առանց էլակետային հումքի նկատմամբ կողմնակի մասնիկների, կողմնակի համի եւ հոտի
2. Ֆիզիկաքիմիական ցուցանիշները.	
1) էթիլային սպիրտի ծավալային մաս (%), ոչ պակաս	96,2
2) ազատ թթուների զանգվածային կոնցենտրացիա (առանց CO ₂ -ի)՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի	15
3) բարդ էթերների զանգվածային կոնցենտրացիա (մեթիլացետատ, էթիլացետատ)՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի	13 (10*)
4) քացախային ալդեհիդի զանգվածային կոնցենտրացիա՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի	4
5) բարձրագույն սպիրտների (սիվոլիսայի յուղի) զանգվածային կոնցենտրացիա (1-պրոպանոլ, 2-պրոպանոլ, 1-բութանոլ, սպիրտ իզոբութիլային (2-մեթիլպրոպանոլ-1), սպիրտ իզոամիլային (3-մեթիլբութանոլ-1))՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի	6
6) մեթիլային սպիրտի ծավալային մասը՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (%), ոչ ավելի	0,03
7) էթիլային սպիրտում ֆուրֆուրոլի առկայությունը	չի թույլատրվում

* Փակագծերում նշված ցուցանիշի արժեքը սահմանվում է Բելառուսի Հանրապետության տարածքում արտադրված ալկոհոլային արտադրանքի համար

Պաշտպանված ծագման վայրի անվանումով օդու, հատուկ օդու արտադրության համար
 օգտագործվող կրկնաթորված էթիլային սպիրտի նույնականացման ցուցանիշները*

Ցուցանիշները	Ցուցանիշի արժեքը
1. Զգայորոշման ցուցանիշները	Թափանցիկ անգույն հեղուկ՝ առանց ելակետային հումքի նկատմամբ կողմնակի մասնիկների, կողմնակի համի եւ հոտի
2. Ֆիզիկաքիմիական ցուցանիշները.	
1) էթիլային սպիրտի ծավալային մաս (%), ոչ պակաս	96,3
2) օքսիդացման փորձ (րոպե) 20 C դեպքում, ոչ պակաս	15
3) քացախային ալդեհիդի զանգվածային կոնցենտրացիա՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի	4
4) սիվոլխայի յուղի զանգվածային կոնցենտրացիա (1-պրոպանոլ, 2-պրոպանոլ, սպիրտ իզոբութիլային, սպիրտ իզոամիլային, 1-բութանոլ՝ անջուր սպիրտի վերահաշվարկով) (մգ/դմ ³), ոչ ավելի	5
5) բարդ էթերների զանգվածային կոնցենտրացիա (մեթիլացետատ, էթիլացետատ)՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի	10
6) ազատ թթուների զանգվածային կոնցենտրացիա (առանց CO ₂ -ի)՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի	15
7) մեթիլային սպիրտի ծավալային մասը՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (%), ոչ ավելի	0,02
8) չոր մնացորդի զանգվածային կոնցենտրացիա՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի	15
9) ազոտային ցնդող հիմքերի զանգվածային կոնցենտրացիա՝ ազոտի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի	1,0
10) ֆուրֆուրոլի առկայությունը	չի թույլատրվում

* Չի թույլատրվում լիկյոր-օդու եւ գինեգործական արտադրության սպիրտ պարունակող թափոնների օգտագործումը օդիների եւ լիկյոր-օդու արտադրատեսակների պատրաստման համար նախատեսված սպիրտի արտադրության ժամանակ

Կրկնաթորված էթիլային սպիրտի պատրաստման համար
օգտագործվող սպիրտահումքի նույնականացման ցուցանիշները

Ցուցանիշները	Ցուցանիշի արժեքը	
1. Զգայորոշման ցուցանիշները 1) արտաքին տեսքը 2) գույնը 3) համր եւ հոտը	թափանցիկ հեղուկ՝ առանց կողմնակի մասնիկների անգույն հեղուկ էթիլային սպիրտահումքին բնորոշ, համապատասխան հումքից մշակված, առանց կողմնակի նյութերի համի եւ հոտի	
2. Ֆիզիկաքիմիական ցուցանիշները. 1) էթիլային սպիրտի ծավալային մաս (%), ոչ պակաս 2) ալդեհիդների զանգվածային կոնցենտրացիա՝ անջուր սպիրտի մեջ քացախային ալդեհիդի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի 3) բարդ էթերների զանգվածային կոնցենտրացիա՝ անջուր սպիրտի մեջ քացախաէթիլ էթերի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի 4) մեթիլային սպիրտի ծավալային մասը՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (%), ոչ ավելի 5) սիվոխայի յուղի զանգվածային կոնցենտրացիա՝ անջուր սպիրտի մեջ իզոամիլային եւ իզոբութիլային սպիրտների խառնուրդի վերահաշվարկով (3:1), (մգ/դմ ³), ոչ ավելի	հումքի բոլոր տեսակներից (բացառությամբ ճակնդեղամաթի) կամ դրանց խառնուրդներից 88 300 500 0,13 5 000	ճակնդեղամաթից 88 500 700 չի նորմավորվում 5 000

Ալկոհոլային արտադրանքի պատրաստման համար օգտագործվող ջրի ցուցանիշները

Պարամետրը	Չափման միավորը	Արտադրության համար նախատեսված նորմատիվային արժեքները								
		օղիների եւ հատուկ օղիների						լիկյոր-օղու արտադրատեսակների, կոնյակի	գարեջրի եւ վրա պատրաստվող խմիչքների (գարեջրային խմիչքների)	թույլ ալկոհոլային խմիչքների
Ընդհանուր կոշտություն	աստ.կ.	0-0,20*	0,21 - 0,40	0,41 - 0,60	0,61 - 0,80	0,81 - 1,00	1,01 - 1,20	0.36-ից ոչ ավելի	2-4 7,0* -ից ոչ ավելի, 7,0**** ոչ ավելի	0,7-ից ոչ ավելի 7,0-ից ոչ ավելի*
1. Հիմնայնություն	մոլ/դմ ³	2,0-ից ոչ ավելի 4,0-ից ոչ ավելի*	1,5-ից ոչ ավելի	1,0-ից ոչ ավելի	0,6-ից ոչ ավելի	0,4-ից ոչ ավելի	0,2-ից ոչ ավելի	2,0-4,0 4,0*-ից ոչ ավելի	0,5-2,0 2,0* -ից ոչ ավելի, 5,0**** ոչ ավելի	1,0-ից ոչ ավելի
2. Պերմանգանատային օքսիդացում, ոչ ավելի	մգ Օ ₂ /դմ ³	6,0	6,0	5,0	4,0	3,0	2,0	2,0 կոնյակ՝ 6,0	2,0	2,0
3. Չոր մնացորդ	մգ/դմ ³	250,0	225,0	200,0	150.0-ից ոչ ավելի	125,0	100,0	190-550,550*	չի նորմավորվում	500-ից ոչ ավելի
4. Ջրածնային ցուցանիշը, պակաս	միավ. pH	7,0 7,8* 7,8**	7,0 7,8**	7,0 7,8**	6,5 7,8**	6,5 7,8**	6,5 7,8**	7,0 7,8* 7,8**	6,0 - 7,0 8,0* 8,0****	7,0
5. Իոնների զանգվածային կոնցենտրացիա, ոչ ավելի	մգ/դմ ³									
1) կալցիում		2,7	5,0	8,0	10,6	13,3	16,0	5,0	չի նորմավորվում	5,2

Պարամետրը	Չափման միավորը	Արտադրության համար նախատեսված նորմատիվային արժեքները								
		օդիների եւ հատուկ օդիների						լիկյոր-օդու արտադրատեսակների, կոնյակի	գարեջրի եւ գարեջրի հիմքի խմիչքների (գարեջրային խմիչքների)	ալկոհոլային խմիչքների
Ընդհանուր կոշտություն	աստ.կ.	0-0,20*	0,21 - 0,40	0,41 - 0,60	0,61 - 0,80	0,81 - 1,00	1,01 - 1,20	0.36-ից ոչ ավելի	2-4 7,0* -ից ոչ ավելի, 7,0**** ոչ ավելի	0,7-ից ոչ ավելի 7,0-ից ոչ ավելի*
2) մագնեզիում		0,8	1,6	2,4	3,2	4,0	4,8	1,6	չի նորմավորվում	5,2
3) երկաթ		0,15	0,12	0,10	0,06	0,04	0,02	0,12	0,30	0,10
4) նատրիում/կալիում		100	80	60	40	20	10	100	չի նորմավորվում	չի նորմավորվում
2) մանգան		0,10	0,10	0,08	0,06	0,04	0,02	0,10	0,05 0,10*	0,10
6) ալյումինիում		0,15	0,10	0,08	0,06	0,04	0,02	0,10	չի նորմավորվում	0,10
7) պղինձ		0,15	0,10	0,08	0,06	0,04	0,02	0,10	2,0	1,0
8) նիտրատներ		10	10	10	10	10	10	10	25	5,0
9) նիտրիտներ		0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	հետքեր
10) քլորիդներ		30,0	25,0	20,0	15,0	10,0	5,0	25,0	70,0	100-150
		60,0*						60,0*	150*	150*
11) սուլֆատներ		30,0	25,0	20,0	15,0	10,0	5,0	25,0	200	100-150
										150*
12) հիդրոկարբոնատներ		125,0	95,0	65,0	40,0	25,5	12,1	244,0	30-122	61,0
		220,0*	140**	140**	140**	140**	140**	140**	122*	

Պարամետրը	Չափման միավորը	Արտադրության համար նախատեսված նորմատիվային արժեքները								
		օդիների եւ հատուկ օդիների						լիկյոր-օդու արտադրատեսակների, կոնյակի	գարեջրի եւ վրա պատրաստվող թույլ ալկոհոլային խմիչքների (գարեջրային խմիչքների)	թույլ ալկոհոլային խմիչքների
Ընդհանուր կոշտություն	աստ.կ.	0-0,20*	0,21 - 0,40	0,41 - 0,60	0,61 - 0,80	0,81 - 1,00	1,01 - 1,20	0.36-ից ոչ ավելի	2-4 7,0* -ից ոչ ավելի, 7,0**** ոչ ավելի	0,7-ից ոչ ավելի 7,0-ից ոչ ավելի*
		140**							250***	
13) սիլիկատներ		5,0 12* 12**	4,0 12**	3,0 12**	2,0 12**	1,0 12**	1,0 12**	5,0 12* 12**	չի նորմավորվում	2,0
14) օրթոֆոսֆատներ		0,10	0,10	0,08	0,06	0,04	0,02	0,05	չի նորմավորվում	չի նորմավորվում
15) պոլիֆոսֆատներ		0,05	0,05	0,05	0,05	0,05	0,05	0,05	չի նորմավորվում	չի նորմավորվում
16) ամոնիակ								չի թույլատրվում 2,0* ոչ ավելի		
17) ծծմբաջրածին								չի թույլատրվում 0,003* ոչ ավելի		
7. Հոտը՝ 20 °C ջերմաստիճանի դեպքում եւ մինչեւ 60 °C ջերմաստիճան տաքացնելիս	բալ	0	0	0	0	0	0	0	0	0
8. Համր եւ կողմնակի համր՝ 20 °C ջերմաստիճանի դեպքում	բալ	0	0	0	0	0	0	0	0	0
9. Գույնը, ոչ ավելի	աստ.	2	2	2	2	2	2	5	չի նորմավորվում	10
10. Պղտորությունը՝ λ-400 նմ եւ S-50 մմ, ոչ ավելի	օպտ. խտ. միավոր	0,002	0,002	0,002	0,002	0,002	0,002	0,005	չի նորմավորվում	1,0

- * Ցուցանիշի արժեքը սահմանվում է Բելառուսի Հանրապետության տարածքում արտադրված ալկոհոլային արտադրանքի համար:
- ** Ցուցանիշի արժեքը սահմանվում է Ղրղզստանի Հանրապետության տարածքում արտադրված ալկոհոլային արտադրանքի համար:
- *** Ցուցանիշի արժեքը սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված ալկոհոլային արտադրանքի համար:
- **** Ցուցանիշի արժեքը սահմանվում է Ղազախստանի Հանրապետության տարածքում արտադրված ալկոհոլային արտադրանքի համար:

Օդու, հատուկ օդու, լիկյոր-օդու արտադրատեսակների, սպիրտային խմիչքների
 և թույլ ալկոհոլային խմիչքների նույնականացման ցուցանիշները

Ցուցանիշները	Ցուցանիշի արժեքը
I. Օդի և հատուկ օդի	
1. Զգայորոշման ցուցանիշները	Թափանցիկ անգույն հեղուկ առանց կողմնակի ներառումների և նստվածքի, փափուկ, օդուն բնորոշ համով և օդու բույրով, առանց կողմնակի համի և բույրի
2. Ֆիզիկաքիմիական ցուցանիշները.	
1) թնդությունը (%)	37,5-ից մինչև 56*
2) հիմնայնությունը-100 սմ ³ օդու (սմ ³) տիտրման վրա ծախսված աղաթթվի ծավալը 0,1 մոլ/դմ ³ կոնցենտրացիայով	3,0
3) քացախային ալդեհիդի զանգվածային կոնցենտրացիա՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի	8 (3**)
4) բարձրագույն սպիրտների (սիվուխայի յուղի) զանգվածային կոնցենտրացիա (1-պրոպանոլ, 2-պրոպանոլ, 1-բութանոլ, սպիրտ իզոբութիլային (2-մեթիլպրոպանոլ-1), սպիրտ իզոամիլային (3-մեթիլբութանոլ-1))՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի	5
5) բարդ էթերների զանգվածային կոնցենտրացիա (մեթիլացետատ, էթիլացետատ)՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (մգ/դմ ³), ոչ ավելի	13 (10**)

* Թույլատրվում է թնդությունից շեղում ± 0,2՝ առանձին շշի համար, ± 0,1՝ 20 շշի համար:

** Փակագծերում նշված ցուցանիշի արժեքը սահմանվում է Բելառուսի Հանրապետության տարածքում արտադրված ալկոհոլային արտադրանքի (օդիների և հատուկ օդիների) համար

Ցուցանիշները	Ցուցանիշի արժեքը
6) մեթիլային սպիրտի ծավալային մասը՝ անջուր սպիրտի վերահաշվարկով (%), ոչ ավելի	0,02
II. Լիկյորներ եւ լիկյոր-օղու արտադրատեսակներ	
1. Զգայորոշման ցուցանիշները, ընդհանուր լուծամզուքի զանգվածային կոնցենտրացիան, շաքարի զանգվածային կոնցենտրացիան (առկայության դեպքում), թթուների զանգվածային կոնցենտրացիան՝ լիմոնաթթվի վերահաշվարկով, թնդությունը	յուրաքանչյուր սպիրտային խմիչքի սպառողական բնութագրերը պետք է համապատասխանեն սպիրտային խմիչքի կոնկրետ անվանման համար տեխնիկական փաստաթղթերով նախատեսված ցուցանիշներին
